1788
LX. 3

№ 1 (154) XV ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍԻ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԹԻՒԱԿԱՆ (1904-1905)

Հայ Յեղ. Դաշնակցութեան 15-րդ տարեդարձն է։ Տասնուհինգ տարի է անցել այն օրերից, երբ Թիւրքահայոց ազատութեան դատը հրացանների որոտումների մէջ իր առաջին քայլերն էր անում։ Որքա՜ն տարբեր էին նրանք ներկայ օրերից... Մի անխռով լաւատեսութիւն էր տիրում հայկական շրջաններում. յոյսերը վարդագոյն, սրտերը զուարթ, յաղթանակը մօտ... Թւում էր, թէ ահա մի քանի կռիւներ, մի քանի շառաչալի նահատակութիւններ տեղի կ'ունենան, և չարատանջ խնդիրը կը լուծուի...

Դառն, ցաւագին հիասթափութիւններ ունեցել են բոլոր ազգերը իրենց ազատագրական ճիգերի մէջ, — մենք բացառութիւն չկազմեցինք օրէնքից։ Մեր հիասթափութիւնը աւելի խոր եղաւ, աւելի յարատև. մեր թշնամին՝ աւելի վայրագ, մեր մարտիրոսութիւնը՝ աւելի ցնցող։ Ոչ անբաւ արիւնը, որով ներկուեցին Հայաստանի լեռներն ու ձորերը, ոչ հերոսանահատակների փառահեղ բոյլքն ու կռիւների անվերջանալի շարքը՝ չհասցրին մեզ բաղձալի վախճանին, — և տասնուհինգ տարուայ անդուլ փոթորկոտ գործունէութիւնից յետոյ, այսօր մենք տեսնում ենք, որ դեռ պէտք է քայլել, թերևս շատ քայլել...

Նախորդ տարուայ փորձութիւնները մի անգամ ևս շեշտեցին մեր առջև այդ անողոք անհրաժեշտութիւնը։ Յեղափոխական տեսակէտից մի եզակի թւական էր այն՝ լի յոյզերով ու յոյսերով։ Երբէք հայի ռազմական կորովը այնքան մեծ չափերով չէր արտայայտուել՝ իր խորութեամբ, թէ տարածութեամբ։ Երբէք Մեծ-Հայքը — դարերով տրորուած մի ստրուկ ու զազիր գոյութեան ծոցում — վկայ չէր եղել այնքան ուժգին ըմբոստացումների, այնքան յանդուգն, — դիւանագէտի լեզուով իսկ հռչակուած — ճակատամարտերի։ Դաշնակցութիւնը անօրինակ ճիգեր թափեց՝ կուռող ժողովրդին զէնք ու դրամ հայթայթելու համար. նա իր ուժերի մեծ մասը տուեց թէ երկրի մէջ, թէ արտասահմանում, եւրոպական դիպլոմատիայի առաջ, — և այս անգամ ևս նրա յոյսերը չ'արդարացան... Նրա դիմաց, ըստ առաջնոյն, ցցուեցին ապառաժի պէս հայ քաղաքական կեանքի երկու անողոք գործօնները — Թիւրքը կառավարութիւնը իր սովորական ճնշումներով, և դիւանագիտութիւնը, մանաւանդ ռուսականը, իր ցինիկ անտարբերութեամբ...

Սոսկալի իրականութիւն, անտարակոյս։

Եւ այդ ցաւոտ իրականութեանը ամէնից շատ գիտակից են նրանք, որոնք ամէն օր ու ամէն վայրկեան ապրում են ժողովրդի հետ, բաժանում են նրա վշտերը։ Մի կազմակերպութիւն, որ ձգտումն ունի ժողովրդական դատը վարելու՝ ինքն իր մահուան դատավճիռը կ'արձակէր, եթէ առաջ տարուէր լոկ յեղափոխական յափշտակութեամբ, առանց գիտակցելու դրութեան պահանջները, ադանց յարմարելու այդ պահանջներին։

Ի՞նչ անել, ահա այն հարցը, որ նորից հնչում է թերահաւատների շրջանում։ Դասալի՞ք լինել, ձեռք քաշել կռուի ասպարէզից, թողնելով ժողովուրդը իր ճակատագրին... Դա մի ելք է, հաճելի նրանց, որոնք սիրում են վճռել կնճռոտ, կենսական խնդիրները ժողովրդից հեռու, նրա կեանքին անտեղեակ։ Բայց դա մի ելք է, որ յեղափոխականի աչքում հաւասար է դաւաճանութեան։ Յեղափոխական կազմակերպութիւնը կարո՞ղ է ինքնկնջը մնանկ յայտարարել, հանդիսաւոր կերպով ժխտել այն պայմանները, որոնք իրան ծնունդ են տուել և որոնք յարատևում են, տարաբախտաբար, միշտ աւելի ու աւելի ծանրանալով։ Այդ պայմաններն են՝ հազար անգամ կրկնուած ու դարձեալ կրկնելի իրողութիւնները — հայի հինաւուրց և ամենօրեայ ճգնաժամը, նրա ոչ միայն բարոյութեան, այլև ֆիզիքական գոյութեան սպառնացող, ամբողջ աշխարհին յայտնի՝ սիստէմատիքական բնաջնջման վտանգը, որ առաջ է տարուում թշնամու կողմից մի սարսափեցնող վճռականութեամբ։ Դա մի սոսկ ֆրազ չէ, ագիտացիոնական միտումներով շեշտուած, այլ մի հաւաստի իրողութիւն, որ ամէն օր պերճախօս փաստերով հաւաստում են մեզ Թիւրքահայաստանի մեր ընկերները։

„Լաւ իմանալով, որ դիմադրութեան չպիտի հանդիպէ, կառավարութիւնը եռանդով վերսկսում է իր ճնշումները. կառգառ գաւառի վրայ զօրքը կողոպուտի արշաւանք կազմեց, համարձակ, անվախ, վստահ լինելով, որ հայդուկի գնդակները չպիտի ճարակեն նրա շարքերը" — այսպէս է գրում իր վերջին նամակում Վասպուրականի մեր թղթակիցը։ Կարդացէ՛ք նաև „Դրօշակի" ներկայ համարում զետեղուած մեր նախկին բանտարկեալ ընկերոջ նամակը, ուր դառն շեշտերով նկարագրում է

Փոքր-Հայքում կատարուող հայկական ամենօրեայ ողբերգութիւնը...

Այո՛, և այդ յարատև բնաջնջման կոչարն է, որ արտագրում է հայի հայրենիքում հարիւրաւոր ըմբոստներ, ճշմարիտ յեղափոխականների շարքեր, որոնք հրապարակ են նետւում կուելու տենչով, եռում են կատաղութեամբ և ցուրտ գերեզմանի մէջ են միայն գտնում իրենց անդորրութիւնը... Հրայրներն ու Վահաններն են, որ ժողովրդի արգանդից ծնելով, իբրև նրա ցասման արտայայտիչներ, մշանջենապէս խռովում են մթնոլորտը, ինքնապաշտպանութեան խրոխտ քարոզով հաւա՞ր են կանչում, զէ՞նք են աղաղակում։ Եւ ի՞նչ է յեղափոխական կազմակերպութեան դերը ամբողջ տասնուհինգ տարուայ ընթացքում, եթէ ոչ ձգտումն՝ գէթ մասամբ գոհացնելու այդ բնական պահանջը, եթէ ոչ ձգտումն՝ զինելու ժողովրդին և կարելին չափ մաքառելու տիրող արհաւիրքների դէմ։

Ոչ,—մենք չենք, որ պիտի յուսահատւենք։ Տասնուհինգ տարուայ գոռ փոթորիկներից ու հսկայական զոհողութիւններից յետոյ չէ, որ մենք մեր սուրը պիտի դնենք պատեանում. և ներկայ խորհրդաւոր պատմական օրերում չէ, որ պիտի մատնւենք անարգ յոռետեսութեան...

Կռիւը Տաճկահայաստանում կարող է փոփոխել իր ձևերի մէջ, բայց երբեք ընդհատւել։ Եթէ Եւրոպան իսպառ անընդունակ է յայտնւում „պահովելու հայ ազգաբնակութիւնը քրդերից ու չէրքէզներից“,—ապա հայ յեղափոխականների վրայ է ընկնում այդ դժուարին, բայց և սրբազան պարտականութիւնը։ Գործող մարմինը կը շարունակէ արծարծել ամենուրեք թիւրքահայերի դատը, կոչ անել ամբողջ հայութեան, աճեցնել իր նիւթական ու բարոյական ուժերը, հաւաքել իր դրօշակի տակ բոլոր զգայուն, ըմբոստ տարրերը և ուղղել նրանց դէպի թիւրքահայ ժողովրդի ինքնապաշպանութեան ու ազատութեան գործը։

*

Տրամադրութիւնը բարձր էր Ռուսահայաստանում։ Եկեղեցական կալուածների գրաւման առթիւ սկսւած շարժումը առաջ գնաց այնտեղ դաւադրութիւնների ու տէռորական փորձերի ձևով։ „Դաշնակցութիւնը“ գործեց մի շարք քաղաքական սպանութիւններ, որոնք ստիպողական պահանջ էին դարձել և կազդուրիչ տպաւորութիւն գործեցին վրէժխնդրութեամբ այրուող ժողովրդի վրայ։ Խոշոր դահիճներից՝ Անդրէեվ, Բոգուսլավսկի և Բրկով ընկան տէռորիստի հարուածների տակ և բազմաթիւ այլ պաշտօնեաներ—ոստիկանապետներ, պրիստաւներ ևն—շանթահարեցին հայոց գաւառներում։ Սարսափը կատարեալ է կառավարչական շրջանների մէջ, տեղ-տեղ բիւրօկրատիան de facto անդամալուծւում է, չէզոքանում և ոչ միայն ահով ու պատկառանքով է նայում „Դաշնակցութեան“ աներևոյթ կոմիտէների վրայ, այլև նրանց ձեռքն է յանձնում շրջանի ղեկը։ Մեծ է „կոմիտէի“ հմայքը ամէն տեղ, և նա աւելի ու աւելի է աճում միապետութեան ճգնաժամի ու ընդհանուր Ռուսաստանի յեղափոխական խմորման հետ։

Հ. Յ. Դաշնակցութեան երրորդ Ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ անցեալ տարուայ սկզբում, նէիրագործեց Կովկասում արծարծւած կռիւը մէկ որոշումով, որով նա պաշտօնապէս ստանձնում էր այդ կռիւը վարելու դերը։ Ընդհանուր ժողովը այդ և ուրիշ որոշումներով կամեցաւ շեշտել, որ ռուսահայոց շարժումը պատահական ու վաղանցուկ մի երևոյթ չէ, այլ ընդհանուր, հակապետական շարժումների հետ կապւած մի օրգանական իրողութիւն, որ ունի իր խոր, տևական պատճառները և որի համար յունիսի 12-ի կայսերական ուկազը սոսկ շարժառիթ էր։ Ուստի և Կովկասեան կուսակցութիւնը հարկ համարեց իր Բարձրագոյն մարմնի բերանով համերաշխ կռուի քարոզ կարդալ Կովկասում գործող ուրիշ կազմակերպութիւնների հետ, որոնք թէև տարբեր իրենց ծրագիրներով, բայց բոլորն էլ նպատակ ունեն կռիւ մղել տիրող ռէժիմի դէմ։

Այդ նոյն նկատումով էր ղեկավարում „Դաշնակցութիւնը“, երբ արձագանք տւեց Ֆինլանդացի յեղափոխականների կոչին և մասնակցեց Պարիզում գումարւած՝ Ռուսաստանի այլևայլ մարտական կազմակերպութիւնների խորհրդաժողովին, մշակելու համար համերաշխ գործակցութեան մի նախագիծ։ Դա մի անցք էր Ռուսաստանի ստրուկ ազգերի տարեգրութեան մէջ և մի խոշոր քայլ դէպի առաջ։ Յեղափոխական կուսակցութիւնները դաշն էին կռում հէնց այն ժամանակ, երբ թշնամին անասելի շփոթութեան մէջ՝ յետ ու յետ էր մղւում ներքին ու արտաքին հարուածներից։

Որքան աւելի է զարգանում Ծայրագոյն Արևելքի կրման, այնքան աւելի է սաստկանում ներքին տագնապը, այնքան աւելի են իրարու մօտենում յեղափոխական ուժերը, այնքան աւելի յուսալի է դառնում ապագան...

Զուարթ օրեր են... Մայրաքաղաքներն ու գաւառները, „Մայր-Ռուսաստանն“ ու հեռաւոր Ծայրերը շարունակ ծփում են ալէկոծութեան մէջ։ Ռէակցիայի դաժանադէմ ներկայացուցիչները սկսում են արդէն փախուստ տալ որոտացող յեղափոխութեան ալիքների առաջ։ Դա ժամանակի նշանակն է։ Եւ դա հաստատուն գրաւականն է բռնապետութեան մօտալուտ անկման, այն անանուն բռնապետութեան՝ որը մի տեսակ տիեզերական Բաստիլ է դարձել ազատատենչ ժողովուրդների համար և որը իր բոլոր ահարկու թափով ծանրացած է նաև բազմատանջ Հայութեան ճակատագրի վրայ՝ Անդրկովկասում, թէ Տաճկաստանում։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԿՈՒՆՔԻ ՍԿԻԶԲԸ

Արիւն Պետերբուրգի փողոցներում, բոլոր Զմեռային պալատի դիմաց, ընդհարում՝ զօրքի և ժողովրդի միջև, ցասման կոչ տանջուած շրթունքներից։

Կորչի՞ միապետութիւնը։

Սպառնական այդ կոչը, որ դեռ երէկ հնչում էր Լեհաստան, Ֆինլանդիա, Կովկաս, հուժկու աղմուկով անցաւ դէպի կենտրոնը, ուր նա լռութեան էր մատնուած, խտացաւ բազմատանջ ռուս ամբոխի կրծքի մէջ և պայթեց բռնապետութեան տաճարի դիմաց, որ Զ մ ե ռ ա յ ի ն պ ա լ ա տ անունն է կրում, դարևոր արձանը մահաշունչ ցարիզմի։

Արձանը դեռ կանգուն է, բայց ինքը ցարը՝ տկարամիտ Նիկոլայ, մատնուած անյայտութեան։ Վասիլեվսկի-Օստրովից եկած առաջին ձայնը սարսափ տարածեց օգոստափառ քաջերի վրայ։ Ցարը փախաւ մայրաքաղաքից և ապաստանեց Ցարսկոյէ-Սելօ։ Թագակիր „հօր“ և ժողովրդի միջև կանգնեց դարևոր պատնէշը՝ անխիղճ և անբան զօրքը՝ սուրը պատեանից հանած, պատրաստ յարձակուելու եղբայր-ժողովրդի վրայ։

„Հա՞յր, լսի՛ր մեր աղերսը“...

Խոնարհ, որդիական հեզութեամբ խմորուած այս խօսքերով սկսեց իր բողոքը, այս անգամ փարաջաւորի ղեկավարութեան տակ, մայրաքաղաքի բանւորութիւնը, որ մի փափագ միայն ունէր — տեսնել ցարի երեսը, մի նպատակ միայն—նրան յայտնել իր անհուն վշտերն ու անբաւ ցաւերը։ Բայց մի՞թէ ցարի երեսը՝ արհամարելի, իրաւազուրկ ամբոխի համար է օծուած և կամ մի՞թէ գուեհիկ բանւորութեան կեղտոտ ոտքերի համար են գեղազարդուած պալատի սանդուխքները, որոնցով այդ ամբոխը դէպի գահը բարձրանալու յանդուգն իղձն ունի...

Ո՛չ և ո՛չ, գոչեց նորին մեծութեան հաւաքական բերանը, և կ ա ր գ ա պ ա հ ո ւ թ ե ա ն վեհագոյն օրէնքը դարձեալ մի անգամ անսանձօրէն գլուխ բարձրացրեց արքայանիստ քաղաքի փողոցներում,—դիակներ, աւելի քան երկու հազար, արիւն և արտասուք, նոյնքան առատ, որքան սուինն ու մտրակը. աղեխարշ տեսարաններ, արժանի Համիդեան անարգ անուան...

Արիւն, բայց ոչ նահանջումն, արտասուք, բայց ոչ յուսահատութիւն։ Եւ արեան ու արտասուքի միջից՝ շարունակում է հնչել մարտի գոչը, յեղափոխական գոռ հրաւէրը, որ փրփրած ալիքների նման գնում, տարածւում է հեռու և հեռու։ Ընկած շարքերին՝ յաջորդում են նորերը։ Շրջականներից բանւորական և գեղջկական զինուած խմբեր են դիմում մայրաքաղաք։ Ցարը հին թագստից դէպի նորն է ապաւինում։ Մայր-թագուհին՝ մշտական սիրուհին բոլոր արկածախնդիրների, մի պալատից միւսն է փախչում։ ՊօլեդՕՕսցեվը „հիւանդ“՝ անկողին է մտել։ Մինիստրները „տանը չեն“, և սարսափը դարձել է համատարած, ամենազօր թագաւորը ծակամուտ թագաւորողների...

Սարսափի շանթը այլևս արտասահման ապաստանած աքսորականներից չէ գալիս և ոչ էլ համալսարանական երիտասարդութիւնից միայն։ Համաժողովրդական է նա։ Բանւորականութիւն, Գապօնի, Ցուբեցկոյ, զէմստվօ, այլևայլ ազգեր, ազատամիտ բանակ, սոցիալիստական շրջաններ — բոլորն էլ միացած են դժգոհութեան և զլանքի շաղկապով, ուղղած գահին, ցարիզմին, յանուն մեծագործ յեղափոխութեան։

Երկունքի սկիզբն է այս։

„Նորածինը“ արիւն է պահանջում։

Մի՛ երկնչիր արիւնից, ռուս ժողովուրդ, տանջանքի և լռութեան դարևոր հերոս։

Եւ դու, Ֆինլանդիա, օրինականութեան չգնահատած երկիր, թափ տուր քեզանից հեզութեան փոշին և ձեռք առ մարտական սուրը։

Իսկ դու Լեհաստան, յեղափոխութեան խնկելի որրան, հաւատարիմ քո անցեալ մեծութեան, առաջ անցիր. սիրտ առ և սիրտ տուր։ Քո օրինակին շատերն են կարօտ։

Եւ դու Կովկաս, երկիր ազգերի և ազանց, մուռացիր պառակտման օրերը և ռազմիկի ուժով՝ ըմբոստութեան նոր կոչ արձակիր։

Թող կորչի՞ ցարիզմը։

Ահա հնչում է որոտը յեղափոխական շեփորի։ Ականջ դրէք, դուք, ցարի անբախտ հպատակներ, և գնացէք այդ կոչի յետևից վստահ, լի հաւատով, մարտական դրակով բռնկուած։

Ցեղափոխութեան ատեն է այսօր։

Պետերբուրգից և Ռուսաստանի այլ քաղաքներից հեռագիրը ամեն ժամ տարածում է յուզիչ լուրեր։ Ցեղափոխական շարժումը ընդլայնւում է քայլ առ քայլ։ Ցոյցեր և ընդհարումներ, բացի մայրաքաղաքից, արդէն սկսել են Մոսկվա, Կիեվ, Օդեսսա, Կիշինեվ, Վիլնա։— Ֆինլանդիան ապստամբական վիճակի մէջ է։ Լեհաստանը շարժւում է։ Լուր կայ, որ Բագուի բանւորական ցոյցը վերսկսած է, քաղաքական գոյնի տակ։ Ամբողջ Արևմտեան Եւրոպան բռնկուած է ցարիզմի խնդրով։ Ֆրանսիա, Իտալիա, Միացեալ Նահանգներում և այլ տեղեր բողոքներ են սկսուած ցարի դիւանների դաղանային արարքների դէմ։ Կազմակերպում են բողոքի և համակրութեան միտինգներ։ Սոցիալիստ մամուլը հրաւէր է կարդում քաղաքակիրթ Եւրոպային՝ աջակցել նորաբոյս յեղափոխութեան։

«Դրօշակի» ներկայ համարից անմիջապէս յետոյ լոյս կը տեսնեն փոքրիկ «Յաւելուածներ», նուիրուած ռուսական շարժման և օրուայ դէպքերին։

„ԳԱՐՈՒՆՆ“ ԱՆՑԱԻ

Մոսկվա, 20 դեկտեմբերի

Նեվայի ափերում դէպքերը յաջորդում են իրար գերբնական արագութեամբ — սահմանադրութեան երազ և դեկտեմբեր 25-ի մանիֆէստը. ժամուլի ազատութեան լուրեր և Պօբեդոնոսցեվի ուղերձը, Միրսկու գերիշխանութիւնը և զեմստվոներին ուղղած բարձրագոյն յանդիմանութիւնը, „գարնանաբեր“ մինիստրի հրաժարականի ձայնը և Վիտտէի վերադարձը...

Դարձեալ յուսախաբութիւն, դարձեալ հին երգեր ռուս ժողովրդի անպատրաստութեան մասին, որ այսքա՛ն տարի և այսքա՛ն տասնեակ տարիներ յետ մղեց ըէֆօրմների նուազագոյն ծրագիրները, այդ անշան յոյսը՝ համբերատար ժողովրդի...

„Գարունը“ անցաւ: Նոյնիսկ այն չափաւոր, կցկտուր, արմատական բնոյթից զուրկ ծրագիրը, որի մեծագոյն աւետաբերը եղաւ Սվեատօպոլկ-Միրսկին, համարեց վաղաժամեայ, վտանգաբեր, ենթարկուեց պալատական կուսակցութեան անէծքին, մեծ-իշխանների կրակոտ դատապարտութեան և մինչև իսկ լռակեաց Նիկոլայ II-ի բարձրագոյն հաճութեան. նա ուրեմն պիտի գնայ, կամ գուցէ արդէն գնացել է իր վաղանցուկ յոյսերը ողբալու պետական դիւանատան այն անթափանց դիւանատնում, ուր այնքա՛ն հանգստօրէն պառկած են Լօրիս-Մէլիքովի „սահմանադրութիւնը“ և Միլիւտինի „զեկուցագիրը“:

Խե՜ղճ զեմստվոներ, գրաքննութեան ճանկերում հիւծուած խե՜ղճ մամուլ: Պատանեկան որպիսի բերկրանքով աւետեցին նրանք „գարնան“ կենդանարար հովերը, որոնք պիտի յաջորդէին քաղաքական խստաշունչ ձմրան, և որքա՛ն սպասելիքներ տարածեցին նրանք ահագին պետութեան բոլոր անկիւններում, այն բորբոսնած խաւերում, որոնք միապետութեան տենչացած „հաւատարիմ հպատակների“ աշխարհն են կազմում: Հսկայական այդ պատրանքը, քաղաքական այդ մեծագոյն յուսախաբութիւնը՝ անկասկած, վերին աստիճանի ողբերգական, թող խրատ լինի, մի նոր դաս նրանց համար, որոնք չխրատուած պատմութեան անթիւ և անհամար փորձերից, տրամադրուեցան կարծելու, որ Աւետեաց երկիրը Ձմեռային պալատի մէջն է, և ժողովրդական փրկութիւնը՝ միապետի գրչի ծայրին...

Միապետը զիջանել չէ ուզում: Նոյնիսկ Պօբեդոնոսցեվի անկման հանդէպ՝ պալատական օլիգարխիան շարունակում է իր անողոք կռիւը „գարնան հովերին“: Եւ եթէ „ոոպէն“ շատ երկիւղալի չլինէր, Միրսկուն կը յաջորդէր ոչ թէ Վիտտէ, որ սպանուած և հրաժարուած մինիստրների շարքում միջին տեղն է բռնում, այլ մի ուրիշը Պօբեդոնոսցեվի դպրոցից, Ալէքսէեվ, Կօկովցեվ, Մուրավիով, իբրև հաւատարիմ շարունակող Պլէվէեան աւանդութիւնների...

Հնարագէտ Վիտտէ, նախկին զեկավարը բոլոր գործերի, երևի կը շարունակէ խաբ տալ հասարակաց կարծիքին, կը փորձէ վերադարձնել Ռուսաստանը Լօրիս-Մէլիքովի օրերին, 80-ական թուականներին, որ Ալէքսանդր III-ի ամպամած թագաւորութեան հանդէպ լուսաւոր կէտ նկատելու արտաքին բոլոր նշաններն ունի:

Սակայն այդ 25 տարի առաջ էր: Քառորդ դարեայ կեանքը նոր պահանջներ յարուցեց, նրբացրեց Ռուսաստանը կազմող բոլոր ժողովուրդների քաղաքական ճաշակն ու ախորժակը, լայնացրեց այն ծրագիրները, որոնք արդի յեղափոխական-դիմադրական տարրերի հաւատոյ հանգանակն են կազմում, նրանց գոհացման միակ պայմանը:

Անցաւ զաւեշտական, շինծու, խաբուսիկ „գարունը“: Եւ այժմ պիտի գայ իսկականը, նա, որի գալուստը յայտարարւում է փոթորիկներով, կայծակ ու որոտով, ամպերի ահեղադղորդ գոռոցով: Մինչև այժմ լսածները այդ գոռոցի նախանշաններն են միայն. — դեռ անհրաժեշտ են նոր Սազանովներ, գործադուլների նորանոր շարքեր, աւելի ուժգին Պօրտ-Արտիւրներ, քաղաքական ըմբոստացման միահամուռ մի պայթիւն. գրոհ պալատի դէմ, գուցէ և մի ողբերգութիւն գահի շուրջը...

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Լեհական սոցիալիստ կուսակցութեան օրգան՝ „Przedswit“ի խմբագրութիւնը ուղարկել է մեզ հետևեալ տեղեկագիրը՝ Լեհաստանի վերջին անցքերի մասին:

Կրակով, 25 դեկտեմբեր

„Վեց շաբաթ սրանից առաջ կառավարութիւնը շարժման մէջ դրեց պահեստի զինուորներին (ըէզերվիստ) ռուսական Լեհաստանի մէկ մասում,—19 շրջաններում (ընդամենը 81 շրջան է): Սոց. կուսակցութեան դիմադրութիւնը և պահեստի զինուորների խմբովին փախչելը՝ չկարողացան արգելք լինել կառավարութեան այդ քայլին, այն պատճառով՝ որ զօրաշարժի հրամանը կատարուեց իր հրատարակումից անմիջապէս յետոյ և ժամանակ չ'եղաւ կազմակերպելու դիմադրութիւնը: Ըէզերվիստների թիւը 110,000 է, որոնցից առնւազը $^1/_{10}$-ը աջողեցին փախուստ տալ: Մօտ 40,000 հոգի հաւաքեցին դրօշակի տակ:

„Մինչև օրս նոր զօրաշարժ չ'եղաւ, այնպէս որ արդիւնաբերական մեծ կենտրոնները, ինչպէս Վարշաւա, Լոդզ, մնում են տակաւին անձեռնմխելի. բայց կառավարութիւնը արդէն պատրաստութիւններ է տեսնում արշաւելու հարաւային Լեհաստանի մի քանի նահանգների վրայ:

„Այս նոր պատուհասի հանդէպ՝ Լեհ Սոց. Կուսակցութիւնը որոշեց ընդունել մի նոր տաքտիկ: Նա հրահանգում է ազգաբնակութեանը՝ կրաւորական, բայց և վճռական դիմադրութիւն ցոյց տալ իշխանութիւններին: Այդ մտքով հրատարակուած մի պրոկլամասիոն տարածուեց 30,000 օրինակներով: Քանի որ, ինչպէս փորձը ցոյց է տուել, զօրաշարժը կատարւում է մեծ անկարգութեան մէջ, ռուս թուլամորթ ու ապականուած զինուորական վարչութիւնը հազիւ թէ կարողանայ գործ տեսնել և այդպիսով զօրաշարժը կը դառնայ անհնարին:

„Հակամիլիտարիստական այդ շարժումը ուժեղացնելու համար՝ կուսակցութիւնը ցոյցեր է կազմակերպում փողոցներում:

„Այդպիսի մի ցոյց կատարուեց, Նոյեմբերի 12-ին, Բատրովիցա կոչւող արդիւնաբերական կենտրոնում: Ժամը 6-ին, գործարանները փակելուց յետոյ, մօտ 100 հոգի կազմեցին թափոր և պարզեցին կարմիր դրօշը, հետևեալ մակագրութեամբ. „կորչի՜ զօրաշարժը“, „կեցցէ՜ Սոցիալիստ Կուսակցութիւնը“: Ապա թափորը շրջեց փողոցները, երգելով լեհական բանուորական հիմնը՝ „Կարմիր

Դրօշակ“։ Ցոյցը տևեց 20 րոպէ. ոստիկանութիւնը թագնու

մ էր. ոչ ոք չձերբակալուեց։ Նոյն ամսի 24-ին տեղի ունեցաւ մի երկրորդ ցոյց, որին մասնակցում էին 500 հոգի. այդ ցոյցը տևեց կէս ժամ։ Ոստիկանութիւնը դարձեալ զգուշութեամբ թագ կացաւ. միայն մէկ ոստիկան փորձեց խլել դրօշակը, բայց նրան էլ քշեցին բռունցքի հարուածներով։ Նման ցոյցեր կազմակերպուեցին մօտակայ քաղաքներում։ Սմէլովում կօրտէժը կազմուեց 400 մարդուց։ Մի ոստիկան անզգուշութիւն ունեցաւ ատրճանակ արձակելու ցուցարարների վրայ. ամբոխը ընկաւ նրա ետևից, քարերի հարուածներով քանդեց նրա տունը և պատուհանից մի քանի տասնեակ անգամ որոտացրեց ատրճանակներ։

„Մի ուրիշ ցոյց աւելի լայն ծաւալով, մի քանի հազար հոգու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Նահանգական Ռատօմ քաղաքում, դեկտեմբերի 4-ին։ Այնտեղ ևս ատրճանակներ կրակեցին ոստիկանութեան վրայ։ Մի քանի հոգի միայն ձերբակալուեցին։

„Դեկտեմբերի 4-ին ցոյց եղաւ Սօսնօվիցում։ Մօտ 1000 մարդ, կարմիր դրօշակը պարզած, անցան քաղաքով։ Հետևանքը — երկու պրիստաւ և երկու ոստիկաններ վիրաւորուած։ Ոչ մի ձերբակալութիւն“։

—

Արիւնահեղ ցոյցերը շարունակւում են Լեհաստանում։ Գաւառական խոշոր քաղաքներից՝ Բագօմի մէջ միայն կառավարութիւնը փորձ արեց կանչել պահեստի զինուորներին։ Քաղաքը նախօրօք լցուեց զօրքով, որի մի ջոկատը պահպանում էր ռուսական եկեղեցին։ Անցորդները ենթարկւում էին խուզարկութեան ու ծեծի։ Դեկտեմբերի 24-ին, երբ կանչուած լեհ զինուորների մի մասը պիտի ճանապարհուէր դէպի Մանջուրիա, ուժանակային ռումբերով քանդուեցին ճանապարհի վրայ ձգուած երկու կամուրջները. երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեց։ Լուրը մեծ ցնցում առաջ բերեց լեհ ազգաբնակութեան մէջ, պահեստի զինուորներից շատերը, խրախուսուած, փախան, ուրիշները բնաւ չներկայացան կօնտրոլին։ Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ արիւնահեղ ընդհարում. հազարաւոր ամբոխը եկեղեցիներից դուրս գալով, հաւաքուեց որոշեալ փողոցի մէջ, թափոր կազմեց ու առաջ անցաւ „Կորչի՛ ցարիզմը և կեցցէ՛ Լեհաստանի անկախութիւնը“ կոչելով։ Ցուցարարները միաժամանակ օդի մէջ կրակեցին, ցոյց տալու համար, որ զինուած են։ Զօրքը, երկար զգուշութիւններից յետոյ, յարձակում գործեց։ Այն ժամանակ ցուցարարները իսկապէս կրակեցին և 26-րդ գնդի հրամանատարը մի սպայ ու մի ժանդարմ շնչասպառ գետին գլորուեցին։ Մէկ հոգի էլ սպանուեց ժողովրդից։ Ցոյցը վերջացաւ. զօրաշարժը կատարւում է այնուհետև մեծամեծ դժուարութիւններով, զինուորները չեն ներկայանում։ Գրգռումը հետզհետէ սաստկանում է ազգաբնակութեան մէջ։

Գրեթէ միևնոյն ժամանակները ցոյցեր ու ընդհարումներ տեղի ունեցան և Լօձում ու Զավերսճում, ուր ցուցարարների մեծ մասը բանտարկուելով՝ ժողովուրդը — թուով 3,000 հոգի — գրոհ է տալիս դէպի բանտի շէնքը, քանդում է պատերը և ազատում բանտարկեալներին... Լ.ձում ցուցարարները սպանել են երկու սերժան, մէկ կօզակ։

ՎՐԱՍՏԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

—

Վրաստանում ևս տեղի ունեցան լուրջ յուզումներ՝ զինուորակոչի առիթով։ La Georgie-ի խմբագրութիւնը հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում մեզ։

Վրացի յեղափոխականների հրահանգով՝ երկրի բազմաթիւ շրջաններում այս տարի արձագանք չտուին զինուորակոչին։

Խէվսուրէթիայում (Թիֆլիսի նահանգ) ոչ մէկը նորակոչներից չէ ներկայացել որոշած օրը։ Կօզակները գնացել են բռնի բերելու, բայց զինուած ժողովուրդը յետ է քշել նրանց։

Գուրիայում (Քութայիսի նահանգ) երբ կօզակները գնացել են փնտռելու ըմբոստացող նորակոչներին, ժողովուրդը ցոյց է արել, պարզելով կարմիր դրօշակը. ապա դպրոցից առնելով Նիկօլայ II-ի պատկերը, ցուցարարները պտտեցրել են նրան գլուխն ի վայր։ Տեղի է ունեցել ընդհարում, սպանել ու վիրաւորել են շատերը։

Քութայիսում, նոյեմբերի 19-ին զինուորակոչի օրը, ժողովուրդը խմբուել է փողոցներում, կարմիր դրօշակներով և „կորչի՛ պատերազմը“ աղաղակներով։

Բաթումում, դեկտեմբերի 10-ին, նորակոչները հաւաքուել են, բայց վրաց կօմիտէի յորդորով՝ հրաժարուել են գնալ. ոստիկանութիւնը միջամտելով, առաջացել է կռիւ, որ տևել է ամբողջ երկու ժամ։

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԲԱԳԻՈՒՄ

—

Կովկասեան նաւթային քաղաքը, որ մի տարի առաջ հսկայական գործադուլի թատր եղաւ, նորից յուզուած է բանւորական ուժգին շարժումով։ Աշխատաւորների արդար պահանջները՝ միացած քաղաքական ընդհանուր դժգոհութեան, որ հաւասարապէս լցրել է հայի, ռուսի, վրացու, թիւրքի սիրտը, մղեցին բանւորներին դէպի նոր ցոյց և դէպի ընդհանուր բողոք։

Գործադուլը սկսուեց դեկտեմբերի 13/26-ին, և անսովոր արագութեամբ տարածուեց երեք գլխաւոր կէտերում — Բալախանի, Բիբի-Էյբաթ և Սև-քաղաք։ Սպիտակ քաղաքն էլ ազատ չմնաց։ Ինչպէս առաջ, այս անգամ էլ հեռախօսային հաղորդակցութիւնը կտրուեց, գործարանները կանգ առան, ձիաքարշը դադարեց երթևեկելուց, նոյնիսկ լրագիրները անկարող եղան լոյս տեսնել։

Եւ աշխատանքի ընդհանուր մեռելութեան միջոցին, ինչպէս միշտ, հրապարակ եկաւ կօզակների վաշտը, զինուած և հեծեալ, լեցուած անսահման կատաղութեամբ դէպի բանւորները։ Հակառակ յեղափոխական մի քանի մարմինների նախազգուշացման, ոստիկանութիւնը դիմեց բռնի, զինուած ուժին, և ընդհարումը դարձաւ անխուսափելի։

Գործադուլի մանրամասները հաղորդում ենք ներքև, մի յատուկ թղթակցութեան մէջ։ Շտապում ենք շեշտել այն բերկրալի համերաշխութիւնը, որ ներկայ գործադուլի վերաբերմամբ ցոյց տուեցին յեղափոխական զանազան մարմինները։ Առաջ ենք բերում մի քանի պրօկլամասիօններ հրատարակուած։

I

ՀԱՅ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Ինքնապաշտպանութեան Կօմիտէն միանգամայն համակրելով բանւորական ամէն մի շարժման, նոյնպիսի համակրութեամբ վերաբերւում է նաև ներկայ տեղական գործադուլին։ Ուստի նա վերցնում է իր վրայ այդ

բանուորական դասի կազմակերպումը և պաշտպանելու է բանուորական տնտեսական շահերը ամէն միջոցներով, նպաստելու է նրա դասի դրական վճռմանը։

Իսկ իր բանուորներին առաջարկում է, իբրև յաջողութեան կարևորագոյն պայման, լինել համերաշխ բոլոր բանուորների հետ առանց ազգութեան և կուսակցութեան խորութեան։

Բանուոր դասակարգի անունով մինչև այժմ այլ կուսակցութիւնների կողմից պահանջների հետ ընդհանրապէս համաձայն լինելով՝ աւելացնում է կուսակցութեանս ոգուն յատուկ պահանջներ։

Այսպիսով բանուորութիւնը պահանջելու է. —

1. 8-ժամեայ աշխատանք։
2. Պայմանաժամից դուրս աշխատանքի վերացումն։
3. Եռահերթ չընդհատուող աշխատութիւնների համար։
4. Սովորական գիշերային աշխատանքների վերացումն։
5. Ցօների նախընթաց օրը աշխատանքը դադարեցնել ժամը 2-ին։
6. Շաբաթուայ մէջ մէկ օր ազատ։
7. Կապալով և կապալառուների միջոցով վերցրած աշխատանքները վերացնել։
8. Իւրաքանչիւր դարբին աշխատում է մի քուրայի վրայ և իւրաքանչիւր խառատ (տոկար) մի դազդայի վրայ։
9. Վարձատրութեան աւելացումը առնուազն 25 տոկոսով։ Նորավարձ բանուորը ստանում է նոյնչափ, որչափ ներկայ արձակուածը։
10. Աշակերտի օրավարձը լինելու է առնուազն 70 կոպէկ։
11. Արհեստաւորը վեցօրեայ աշխատանքի համար ստանալու է եօթ օրուայ վարձ։
12. Աշխատութեան համար դուրս ուղարկուած բանուորը ստանալու է մէկ ու կէս օրավարձ։
13. Բանուորները հիւանդութեան ժամանակամիջոցում ըստանալու են լրիւ վարձատրութիւն։
14. Բոլոր բանուորները անպայման բժշկելու են նաւթարդիւնաբերողների խորհրդի հաշուով։
15. Մահացած կամ վնասուած բանուորի համար տրւում է վարձատրութիւն նոյն չափով, ինչ չափով ստանում էր ինքը բանուորը։
16. Մշքի առաջ ունենալով պետութեան կողմից ձեռնարկելիք բանուորական ապահովագրութիւնը, պահանջելով, որ անպայման լինի արդիւնաբերողների հաշուից։
17. Ամէն տեսակ տուգանքների անպայման վերացումը։
18. Արդիւնաբերողների և բանուորների միջև ծագած վէճերի քննութիւնը յանձնել միջնորդ դատարանին՝ կազմուած երկու կողմի ներկայացուցիչներից, իսկ արձակուած վճիռները պարտադրեցուցիչ համարել երկու կողմի համար էլ։
19. Բանուորի արձակումը կարող է տեղի ունենալ միմիայն միջնորդ դատարանի որոշմամբ։
20. Խիստ վայելուչ վերաբերմունք դէպի բանուորը։ Դատեր պատասխանատուութեան ենթարկել այն անհատներին, որոնք կը հիրաւորեն բանուորի անձնական կամ ազգային պատիւը։
21. Բանուորներ վարձելու և արձակելու ժամանակ ազգային խտրութեան միանգամայն վերացումը։
22. Առողջապահիկ և յարմար բնակարաններ՝ տալով վառելիք, լուսաւորութիւն և ջուր։
23. Ձրի և բնակարաններին մօտ բաղանիք։
24. Բաւարար քանակութեամբ առողջապահիկ կառքեր վիրաւորներ և հիւանդներ տեղափոխելու համար։
25. Արհեստանոցները դնել լիովին առողջապահիկ պայմանների մէջ։
26. Ձրի և պարտաւորեցուցիչ ուսումն բանուորների և արհեստաւորների երեխաների համար. տեղացիների համար դասատուութիւնը մայրենի լեզուով։
27. Իւրաքանչիւր ֆիրմա պարտաւոր է ունենալ գրադարան-ընթերցարան բանուորների համար, նաև ճաշարաններ։
28. Բանուորը ստանալու է լրիւ վարձատրութիւն անգործ մնացած դէպքում, եթէ այդ առաջ է եկել իրանից անկախ պատճառներից, նաև գործադուլների ամբողջ ժամանակամիջոցում։

Հ. Ց. Դ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆ. ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

Բագու, 19 դեկտ.

II

ԲԱԳՈՒԻ ԲՈԼՈՐ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Ընկերներ-բանուորներ,

Գործադուլը շարունակւում է. նրան յարում են բոլոր այն բանուորները, որոնք գիտակից են իրենց դանը, անելանելի վիճակին։

Այժմ ընկերներ, հասել է ժամը՝ մի անգամ ընդ միշտ վճռելու.— ի՞նչ դիրք բռնել, ի՞նչ անել, որպէս զի այն բարոյաբարոյները, որ մենք այսօր ձեռք կը բերենք, վերջը մեզանից չխլուեն։

Ընկերներ. միայն այն ժամանակ, երբ կօգակները, ժանդարմներ, ատիկանութիւնը, այսինքն ցարի ամբողջ կառավարութիւնը կը դադարի պաշտպանել մեր թշնամիներին — կապիտալիստներին, երբ նա չի խանգարի մեզ՝ խմբւելու և քննելու մեր դրութիւնը, երբ նա չի արգելի մեր ընկերակցութիւնները — միայն այն ժամանակ կարող կը լինենք մեր ձեռքում պահել արած նուաճումները։

Իսկ այդ, ընկերներ, տեղի կ'ունենայ միայն այն ժամանակ, երբ ցարի միահեծան կառավարութեան փոխարէն՝ մենք կը հաստատենք ընտրական կառավարութիւն — Ժողովրդական պարլամենտ. ուր մեր ընտրած պատգամաւորները կը պաշտպանեն մեր շահերը։

Դադարեցրէք, ընկերներ, ձեր պարապմունքը, փողոց դուրս եկէք և յայտնեցէք ձեր պահանջները։ Պահանջեցէք Ժողովրդական պարլամենտ, ընդհանուր գաղտնի ձայնաւորութիւն, ազատութիւն մամուլի, խօսքի և համախմբման, անկախութիւն Կոչկոսի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և քաղաքական բոլոր բանտարկեալների ու աքսորեալների կատարեալ ազատութիւն։

Զէնքը ձեռին, ընկերներ, գրոհ տուեցէք ցարի ապստամբների դէմ, որոնք ձեր բերանն են փակում և ձեր ժողովները քանդում։

Դէպի առաջ, ընկերներ, դէպի համաշխարհային վճռական կռիւ։

Կորչի՞ միապետութիւնը։

Կեցցէ՞ Ժողովրդական պարլամենտ։

ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԲԱԳՈՒԻ ԿՕՄԻՏԷՏ

III

ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Մենք, բանուորներս, դուրս կը գանք Բագուի փողոցները, որպէս զի ամբոխ և ազատ կերպով ասենք, որ ինքնակալական կարգը, մինչև այժմ կենդանի ամէն ինչ ճնշող — պէտք է աչնչանայ, ջնջուի և փոխարինուի ազատ կերպով ընտրուած Ժողովրդական ներկայացուցիչների կառավարութեամբ, որ ճաբօնիայի դէմ մղուող անվիա, կործանիչ պատերազմը պէտք է դադարեցնի, որ պէտք է մշակուեն նոր օրէնքներ, որոնք ապահովեին ամէն մի մարդու, ով որ ուզէ նա լինի — հայ, ռուս, հրէայ, թիւրք և այլն — միատեսակ հնարաւորութիւն լիակատար մարդավայել կեանք վարելու։

Անցեալի փորձից դուք լաւ գիտէք, որ մեր ցոյցերը ոչ մի մանաւոր մարդու ոչ մի կերպ չեն ազատում։ Թոյլ ինչպէս ձեզ յայտնի է, կառավարութիւնը թիֆլիզեցի զօրք է բերել, որպէս զի մեզ հնարաւորութիւն չտայ ցոյց կազմելու։ Մենք, սակայն, չենք կարող այդ արգելքի առաջ կանգ առնել, ինչ որ լինի՝ մենք դուրս կը գանք ցոյցի և հնարաւոր է, որ Բագուի փողոցները արեամբ հեղեղուեն։

Մի՛ լինիք անմասնակից հանդիսատեսներ, միացէք մեզ հետ, քանի որ մենք կռւում ենք ձեր երջանկութեան համար։ Որքան հսկայական լինի ցոյցը, նոյնքան հաւանական է, որ կառավարութիւնը երկիւղ կրէ զէնքի դիմելու։

Խանգարեցեք ադմինիստրացիային, ազդեցէք զօրքի և ապաների վրայ, որպէս զի նրանք չճնշեն ուժով ճնշել մեր բողոքը։ Բռնութեանը մենք բռնութեամբ կը պատասխանենք։ Ինքնակալական կարգը խեղդւում է սեփական յանցանքների մէջ և նրա դէմ մղած միահամուռ, սերտ գրոհ՝ մեզ յաղթանակ է խոստանում։ Ով որ պատիւ ու խիղճ ունի, ով թանկ է գնահատում իր զաւակների ապագան, իր հայրենիքի ապագան, նա չի մնայ անուշադիր հանդիսատես և մեզ կը միանայ։

Դէպի հրապարակ մեր կարմիր դրօշակների տակ. մենք կուգում ենք ցարի կառավարութեան բոլոր ճնշեալների և հարստահարեալների ազատութեան համար։ Մենք պահանջում ենք. —

Ամբողջ ժողովրդից ազատ կերպով ընտրեալ Հիմնադրական ժողովի հրաւիրելը։

Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունք։

Բոլոր ժողովուրդների օրէնքի առաջ հաւասարութիւն, առանց սեռի և ազգութեան խտրութեան։

Մամուլի, խօսքի, ժողովների, միութիւնների և գործադուլների ազատութիւն։

8-ժամեայ բանուորական օր։

Կորչի՜ ցարի ինքնակալութիւնը, կորչի՜ պատերազմը։

Կորչի՜ ցարի մանիֆէստը, կորչի՜ կապիտալիզմը։

Կեցցէ՜ դէմոկրատ հանրապետութիւն, կեցցէ՜ Ռ. Ս.-Դ. հանրապետութիւն։

Կեցցէ՜ միջազգ. Սոց.-Դէմոկրատիան, կեցցէ՜ Սոցիալիզմը։

Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ԲԱԳԻՒ ԿՕՄԻՏԷՏ

ԲԱԳԻՒ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԱԳԻՒՑ)

28 դեկտեմբեր

Գործադուլը պայթեց անսպասելի կերպով դեկտեմբերի 13-ին (հին տոմ.)։ Մի 10-12 օր դրանից առաջ, Ռուս. սոց.-դէմոկրատների կողմից դիմում էր եղել „Դաշնակցութեան“ տեղական մարմնին, առաջարկելով խորհրդակցել ընդհանրապէս բանուորական շարժումների մասին, որպէս զի ապագայում՝ տեղի ունենալիք գործադուլների ժամանակ բոլոր յեղափոխական մարմինների գործողութիւնները ներդաշնակ լինեն։ Դաշնակցականները մի երկու նիստ գումարելով, մշակել էին մի շարք խնդիրներ և իրենց ներկայացուցչի միջոցով առաջարկել էին սոց. դէմոկրատներին՝ յատուկ ժողով գումարել՝ հարցերը քննելու համար։ Առաջարկը հաւանութիւն է գտնում, սոց.-դէմոկրատները խոստանում են, բայց լռութիւն են պահում մինչև գործադուլի օրը։ Դեկտ. 13-ին միայն խնդրում են Դաշնակցութեան ներկայացուցչին՝ գալ իրենց ժողովին։ Դաշնակցական մարմինն էլ նկատելով, որ գործադուլը հրատարակուած է առանց իր խորհրդակցութեան ու անյարմար ժամանակ, պատիրում է իր ներկայացուցչին գնալ ու յայտնել, որ ինքն առայժմ ձեռնպահ է մնում։ Սոց.-դէմոկրատների մեծամասնութիւնը նոյնպէս գտնում էր, որ բոլորն անյարմար է. բայց ի՞նչ անել. պէտք էր այնուամենայնիւ, պահել գործադուլների վարկը։ Եւ Դաշնակցութեան տեղական մարմինը իր ղեկավարութեան տակ գտնուող բանուորութեան կողմից բաց թողեց մի թռուցիկ, որի մէջ դրեց 24 պահանջ։ Միաժամանակ նա համաձայնեց ուղարկել երկու ներկայացուցիչ՝ ուրիշ յեղափոխական կազմակերպութիւնների հետ նիստեր գումարելու և համերաշխ գործակցութեան միջոցներ խորհելու։ Մինչ այդ՝ բանուորական պահանջների մի ինչին մասը միայն ընդունել էր նաւթարդիւնաբերողների կողմից, մեծ մասը մերժուել էր։ Յեղափոխական կազմակերպութիւնների ներկայացուցիչների խառն ժողովը մշակեց պահանջների մի մինիմում, 25 կէտից բաղկացած և ղրկեց նաւթարդիւնաբերողների յանձնաժողովին. վերջինս ընդունեց 23 կէտը ինչին փոփոխութիւններով։ Ամենամեծ յաղթանակը, որ տարաւ բանուորութիւնը այս գործադուլի միջոցին, այն է, որ դրամատէրերը ընդունեցին 9-ժամեայ աշխատանքի օրը։ Այն ժամանակ Դաշնակցական մարմինը, ի թիւս ուրիշների, հրատարակեց մի նոր թռուցիկ, հրաւիրելով բանուորներին՝ վերսկսել աշխատանքը պայմանական ամսի 28-ին։

Պէտք է ասել, որ գործադուլի ընթացքում դրամատէրերը դիմել էին իշխանութեանը՝ խնդրելով, որ ոստիկանութիւնը և զօրքը չմիջամտեն, քանի որ խաղաղ գործադուլ է։ Եւ իրօք, նրանք չէին միջամտում։ Ամբողջ 10-12 օր ազատ, բազմամարդ ժողովներ էին տեղի ունենում։ Բայց չորս օր առաջ, երբ բանուորները Բաքախանի Նօբէլի մօտ սկսում են աշխատել, գիտակից բանուորութիւնը գնում է գործը ընդհատելու. գալիս է կօզակների մի վաշտ, և մի պարապ զրպից յետոյ սկսում են կրակել բանուորների վրայ։ Սպանուում են 6 հոգի, վիրաւորուում են 23 հոգի։ Սպանուածների մեծ մասը հայ է, մէկը թէ երկուսը միայն մահմէտական. ոչ մի ռուս չէ սպանուած։ Զօրքը զոհ տուեց մի կօզակ։ Նման դէպք տեղի ունեցաւ միևնոյն օրը Բիբի-Էյբաթում, ուր Մուխտարովի գործարանի մօտ ընդհարում եղաւ գործադուլ անող և աշխատող բանուորների միջև։ Վերջիններիս օգնութեան է հասնում կօզակների խումբը, և սպանուում են էլի 6 հոգի, վիրաւորուում են 10-12 հոգի։ Սպանուածների մէջ դարձեալ ոչ մի ռուս. վիրաւորուածների մէջ—շատ ինչին տոկոս։ Մեծ մասը կրկին հայ է, թէև քիչ չէին գործադուլին մասնակցող և ռուս բանուորները։

Վստահելի աղբիւրից հաւատացնում են, որ դա պատահական բան չէր. կոտորածին մասնակցող մի զինուոր հետևեալ օրը՝ հարբած դրութեան մէջ՝ պատմել է, որ հրամայուած է եղել խփել գլխաւորապէս հայերին և խնայել ռուսներին. . .

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒԻՒ

ԿՈՒԻՆԵՐ

ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

(Մանրամասն նկարագրութիւն)

1. ՀԵՂԻՆԻ ԿՈՒԻԸ

1904 թ. յունուար 10-ին Տավրներ (Կէլիէկուզանի շրջանի մէջ մի ագարակ է, Կէլիէկուզանէն 1½ ժամ հեռու դէպի արևելեան հարաւ) հաւար եկաւ Իշխանձորէն՝ թէ միւտիր Քօռ Սլօն 15 սուարիներով և իր աշխրէթով եկեր է՝ Հեղին, Արտոնք, Ընկուզնակ և Իշխանձորը թալանելու։ Վահանի և Անդրանիկի կարգադրութեամբ, խմբի անդամներէն մի քանիսը՝ Գէորգ Զաւուշի և Մուրատի ղեկավարութեան տակ՝ հոն օգնութեան կ'ուղարկուին։ Տղայք կը հասնին Իշխանձոր, ուր փախեր եկեր էր հեղնցի հարուստ հայ մը, Վարդան անունով. և օգնութիւն կ'ուզէր հայ զինուորներէն իր պատիւը և կայքը ազատելու համար։

Այս Վարդան առաջ ոչ մի հաւատ չ'ունէր յեղափոխութեան վրայ և կը մտածէր սուլթանի հաւատարիմ հպատակ ձևանալով՝ ապահովել զինքը։ Դա մի ժամանակ նոյնիսկ մատնիչ ճանչցուեցաւ յեղափոխականներու

կողմէն, որոնք պիտի սպաննէին զինքը։ Անգամ մը Քօռ Սլը յայտնի աւազակը Հեղին գալով կը յափշտակէ յիշեալ Վարդանի 60 ոչխարը, 3 ձին և 20 ոսկի դրամը։ Այդ ժամանակ միայն կը հաւոզի սուլթանի հաւատարիմ հպատակը, որ խաբեր էր իր հաւատքին մէջ և որ հաստն ու բարակը մէկ գին ունին։ Եւ միակ միջոցը կը գտնէ՝ յեղափոխականներուն դիմել և անոնց պաշտպանութիւնը խնդրել։ Ատոր համար էր որ նա Իշխանձոր եկած էր։ Տղայք, առանց ի նկատի ունենալու Վարդանի հակայեղափոխական անցեալը, վեր կը կենան գնալու Հեղին՝ աւազակը պատժելու համար։ Երբ տղայք ճանապարհ կ'ինան՝ քրդերը կ'իմանան անոնց շարժումը և անմիջապէս կ'իմացնեն Քօռ Սլոյին։ Սա Փուսուր կը փախչի՝ կառավարութենէն ուժ ստանալու համար, որովհետև այդ ատեններ Տիգրանակերտէն Փուսուր էր եկեր 400 հոգիէ բաղկացած մի գունդ զօրք։

Տղայք Հեղին հասնելուն՝ կը գրեն Քօռ Սլոյին, որ տարած թալանը ետ դարձնէ։ Նա կը մերժէ թալանը դարձնել և բագրանցի աշիրէթն ալ օգնութեան կը կանչէ. միևնոյն ժամանակ նամակ մը կը գրէ տղայոց՝ թէ ինքն նպատակ չունի հայերու հետ թշնամանալու, այլ կառավարութիւնն է որ այդ ընել կուտայ։

Ճիշդ այս ժամանակներ Հեղին կերթան նաև մի քանի ահարոնքցիներ, որոնք նոյնպէս օգնութիւն կ'ուզէին տղաքներէն։ Մի քանի օր առաջ քրդերը Ահարոնքի վրայ էին յարձակեր և սպաններ էին ինն հոգի հայերէն և փախցուցեր եօթ տարեկան մի աղջիկ։ Զարագործները բոլորովին ազատ էին, բայց կառավարութիւնը համիդիական արդարադատութեամբ՝ եղած ոճրագործութեան համար իբր յանցաւոր ձերբակալած էր հայերէն 8 հոգի։

Երբ Սլըն զօրքեր ու քիւրդեր հաւաքած Հեղինի վրայ կուգար՝ տղայոց ոգևորութիւնը սահման չունէր. կռիւը սկսաւ, բայց յեղափոխականներու մօսինները թոյլ չտին թշնամիներուն առաջանալ. վերջինները պարտաւորուեցան շուտով ցրիվ և քաշուիլ։ Այդ տեղի ունեցաւ յունուարի 17-ին *)։

Երբ թշնամիները քաշուեցան, տղայքն ալ չմնացին գիւղի մէջ. իրենց հետ վերցնելով գիւղացիներուն և անոնց շարժական կայքը, անցան Անտկունք։ Զինուորներէն Պօղոս քանի մը ընկերներով մնաց Մեզրէ՝ Հեղինի գիծը պաշտպանելու, քրդերի յանկարծակի յարձակման պարագային։ Մի օր Մեզրէի մօտեր կ'երևին մի քանի քրդեր, լրտեսելու համար այդ կողմերը. ատոնցմէ մէկն էր Սալէհ անուն յայտնի ոճրագործը, որ սպաններ էր չորս հայեր և Սերոբի մատնիչներուն միացած՝ մեծ դեր էր խաղացեր մատնութեան գործին մէջ. Պօղոս կ'իմանայ այդ քրդերու ներկայութիւնը և յանկարծակիի բերելով կը բռնէ երեքն ալ. կը սպաննէ Սալէհը, իսկ միւսները ազատ կ'արձակէ։ Այդտեղէն Պօղոս կ'անցնի Ընկուզնակ, ուր եկեր էին նաև Մուրատ և Գէորգ Զաւուշ։

2. ՅՈՒՆԱՆԻ ԿՌԻՒԸ

Յունուար ամսին Հրայր և Առաքել հինգ զինուորներով դաշտն էին իջել՝ գործերը կարգադրելու և զինուորական խորհուրդ կազմելու համար։ Կառավարութիւնը իմանալով անոնց ներկայութիւնը՝ կրսկսի հետամուտ լինել զիրենք բռնելու։ Սուրբ Սարգսի պահոց առաջին օրերը՝ Առաքելը կը բաժանուի Հրայրէն և Յունան կերթայ չորս ընկերներով այնտեղ մէկ-մէկ, երկու-երկու կապրին հայոց տուները մի քանի օր։ Փետրուարի սկզբին լուր կը բերեն Առաքելին, թէ զինուորները պաշարեր են զինուոր Գրիգորը և Զնտօն։ Իսօն դուրս կուգայ իմանալու համար թէ ինչ կ'անցնի կը դառնայ։ Դուրսը նա կը նկատէ, որ զինուորներ խոտեր վերցուցած կը տանեն տղայոց գտնուած տունը այրելու։ Իսօն կը կրակէ հրացանը, որու ձայնէն Առաքել և ընկերներն ալ դուրս կը նետուին տուներէն և կը յարձակին զինուորներուն վրայ։ Զինուորները փախչելով կը մտնեն Մեղրագետի թմբերուն տակ։ Առաքել երկու հոգու դիրք պահել կուտայ գիւղի աղայի տունը (քէօշկ), որ գիւղի մէջ ամենաբարձր շինութիւնն է, իսկ ինքն միւս ընկերներու հետ թիւրք զինուորներու ձիերը կը բերէ և քէօշկի տակ պատրաստ կը պահէ։ Թիւրք զօրքերը արդէն հաւարը ձգեր են ամէն կողմ. շուտով օգնութեան կը հասնի Նորշէնի զօրքը։ Կռիւը բաւական սաստիկ կերպարանք կը ստանայ։ Կռուի ժամանակ մի զինուոր նեղ մնալով տղայոց արձակած գնդակներէն՝ կը փախչի և կը մտնէ տուն մը. Իսօն կը նկատէ զայն և խոտ կը բերէ այրելու զանիկայ տան մէջ։ Տանտէրը, որ կնիկմարդ մը էր, կը միջնորդէ և չուզեր թոյլ տալ, որ Իսօն իր գիտաւորութիւնը կատարէ, ճիշդ այն ժամանակ, երբ Առաքելի ձայնն ալ միւս կողմէն կը կանչէր Իսօյին, որ զինուորի մը համար ժամավաճառ չլինի, այլ կարգին դիրք մը պահպանի, բայց կինը չի մոռնար զինուորին հրացանն ու փամփուշտները առնելէն յետոյ միայն արձակել։

Հրացաններու բերնէն արձակուող կրակը և վառօդի հոտը՝ կ'արծարծէ տղայոց կուի եռանդը։ Առաքելը հեգնելով թշնամիներու ուժը պոռալով կ'ըսէր. „Այդպէս 100-ով 200-ով կ'ուզէք մեզի հետ գլուխ ելնել, անիծածնե՛ր, լաւ գիտցէք, որ խաբուած էք"։

Իսկ կտրիճ Իսօն արծուի պէս կտուրէ կտուր կը թռչէր կուելու ժամանակ՝ դիրքերը պահելու համար։ Երեկոյեան ժամը 5-ին կռիւը կը վերջանայ, տղաներուն ոչ մէկ վնաս. թիւրքերէն կրսպաննուի մէկը և մէկ ալ կը վիրաւորուի։ Երբ մշուշը կը թանձրանայ դաշտին վրայ և մութը կամաց-կամաց կը տիրէ, մեր քաջերը կը նստին զօրքերէն խլած ձիերուն վրայ և կը հեռանան գիւղէն։ Կռուի ձայնէն շրջակայ գիւղացիներ և Հրայր՝ կը պատրաստուին օգնութեան հասնիլ, բայց տղայք արդէն հեռացած էին։

3. ՏԱՓԸՔԻ ԴԱՒԱԴԻՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Յունանի կուի լուրը Տավրներ կը հասնի, Սեպուհ, Սմբատ և Ասատուր՝ զինուորները վերցնելով կ'ուզեն օգնութեան գնալ և կը հասնին մինչև Հաւատորիկ։ Անդրանիկն ալ մի ուրիշ խմբով մինչև Քոփի կուգայ նոյն նպատակով։ Քոփի մէջ Անդրանիկ կ'իմանայ, որ մի քանի տափքցի քիւրդեր, որոնց գիւղն էր եղեր նախորդ գիշեր, մտադրուած են եղեր սպաննել զինքը։ Ետ կը կանչէ Սեպուհը և անոր հետ միասին կը վերադառնայ Տափքը։ Այնտեղ կը հաւաքէ քրդերը և կը պահանջէ, որ անպատճառ իրեն յանձնեն իր դէմ դաւադրութիւն սարքողը. քրդերը կը յանձնեն դաւաճանը, որ կրսպաննուի անմիջապէս Անդրանիկի հրամանով։ Այնուհետև կը

*) ԾԱՆՕԹ. — Հեղինի մէջն է 1894-ի կռիւներու յայտնի հերոս էնրքցի Դրգոյի գերեզմանը։

գրաւեն քիւրդերու քէօշկերը, 24 զէնք, 400 ոչխար և 100-ի չափ տաւար։ Իրենց սիրելի հերոսի կեանքի դէմ եղած դաւադրութեան լուրը առնելով՝ Սէմալի, Հէնբքի, Կէլիէկուզանի, Շուշնամերկի, Քօփի, Կարմավի, Աղբիի, Իրիցունքի, Ալիանցիքի և ուրիշ գիւղերու իշխանները իրենց զինուորներով, մօտ 300 հոգի, անմիջապէս Տափրք կ'իջնեն՝ յանցաւորները պատժելու. բայց մինչև անոնց հասնելը, պէտք եղած կարգադրութիւնը արեր էր Անդրանիկը։ Կը կարգադրի նաև, որ քիւրդերը բոլորովին հեռանան Տափրքէն։ Այստեղ հայերը քիւրդերու մօտ գտան իրենցմէ թալանուած և տարուած շատ մը գոյքեր։

Տափրքի դաւադրութենէն մի քանի օր յետոյ, Տիգրանակերտէն Սասուն կուգայ գունդ մը նոր զօրք։ Գէորգ Զաւուշ նամակ կը գրէ Տավշներ և օգնութիւն կ'ուզէ։ Ատոր համար ալ Սմբատ մի քանի զինուորներով կերթայ կը միանայ անոր։ Սմբատ Հրկար չի մնար Ընկուզնակ, այլ կանցնի Տալորիկ, որ շարունակ Բուսանաց քիւրդերու սարսափին ենթակայ էր։ Քիչ վերջ Գէորգ Զաւուշ ինքն ալ կերթայ Արտկոնք, ուր նոր զօրքեր էին եկեր. իսկ իր տեղը Ընկուզնակի մէջ կը թողնէ Մխիթարը։ Գէորգ Զաւուշ այդ երեք դիրքերի վրայ կը հսկէր շատ արթուն կերպով։

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ՄՈՒՇ

Մուշ 25 Նոյեմբեր, 1904

Ցաւալի է ըսել, որ անլուր ճնշումներու շնորհիւ գաղթի շարժումներ սկսեր են սասունցիներու մէջ. լեռ ու ձոր ձիւնով պատած է, օդին խստութիւնը շատ ահռելի է։ Կառավարութիւնը շարունակ արգելքներ կը հանէ դէպի Սասուն պարէնի փոխադրութեան, որ կը կատարեն շալակով ո՛չ միայն սասունցի տղամարդիկ, այլ կիներ, փոքր մանուկներ և աղջիկներ՝ այն ալ մերկ...

Կարելի էր գուցէ համբերել օդի անողոքութեան, սակայն անկարելի է դիմանալ Սասուն հաստատուած թիւրք զօրքերու անկարգութիւններուն։ Անոնք շարունակ տարապահիկ աշխատութիւններով կը չարչարեն ժողովուրդը. իրենց զինուորական պիտոյքները, պաշարը, նոյնիսկ վառելանիւթը կը փոխադրեն խեղճ սասունցիի կոնակով՝ առանց ոևէ փոխարինութեան։ Հաբաթ մը առաջ Մուշէն 70-ի չափ զինուորներ կը գնան Սասուն և երկու օր կը մնան Հէնբք. բոլոր հայերը ծեծելով ու նախատելով տարապարհիկ կը վարեն գիւղէ գիւղ և կը լափեն խեղճերու օրապահիկը, նոյնպէս Սէմալի մէջ ալ։ Երբ ժողովուրդը կը գանգատի, կ'ըսեն. „Մեռնի՛ք, հոգինիդ ելնէ՛, մեր գրաստներու փոխարէն շարունակ ձեզ պիտի ծառայեցնենք, շունե՛ր"...

Այս բանէն յուսահատած՝ մաս մը ընտանիքներ Հէնբքէն, Սէմալէն, Աղբիէն ելն, գաղթեր են Դաշտ։ Կը վախցի, որ գաղթը ընդհանրանայ, նոյնը կը լսի Տալորիկի կողմերէն։ Նոյեմբեր 13-ին այն կողմի զինուորներ կը քայքայեն հայոց 5 տուն ի Տալորիկ, 2՝ ի Հլողինք, 3՝ ի Հարթք և փայտերը կը տանեն ու կը վառեն։ Ասոր վրայ Տալորիկի Էգու թաղը կը գաղթէ Փուրիս և Խլհովիտ գիւղերը. եթէ զինուորները հոն ալ հալածեն, բոլորովին պիտի գաղթեն։ Արդէն կը ստիպեն ու կը ճնշեն, որ հայերը փախչին։ Հոսնուտցիներ փախեր են Քրդամանք գիւղ, Թուալինքցիները Ցարդխիկ, Հոգմանքէն 6 տուն Փսանաց գաւառ։

Ժողովրդի կացութիւնը շատ ու շատ ծանրացաւ նոր և սոսկալի հարկահաւաքութեամբ։ Հրէշ ոստիկանները գիւղերու մէջ կը բանտարկեն ոչ միայն մարդիկը, այլ և կիները։ Մարդկանց բերանը աղը կը լեցնեն, կը թքնեն, կը ծեծեն, կ'անպատուեն, պաղ ջուրի մէջ թաթխելով կը չարչարեն, շնայելով որ ժողովուրդը իր պարտքերը տուած է. նորէն փայտ ու մխ չարչարանքով կը պահանջեն և կը գանձեն։ Ժողովուրդը բողոքելէ ձեռք քաշեր է, որովհետև կառավարութիւնը արգելած է և կարգադրած է, որ հայերուն կողմէ բողոքագիր չտրուի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 27 դեկտեմբերի 1904

— Ի՞նչ եմ տեսնում, ի՞նչ եմ լսում, պիտի գոչէր „Վէրք Հայաստանի"ի սգաւոր հեղինակը, եթէ գերբնական հրաշքով դուրս գար իր անյայտ գերեզմանից, և կանգնած Քանաքեռի բլրակի վրայ նայէր իր շուրջը, դէպի Հայկական աշխարհը։

Ի՞նչ աներևակայելի տարբերութիւն։ Երեք քառորդ դար առաջ, երբ քրիստոնեայ ռուս բանակը ոտք դրեց Արարատեան դաշտը հայութեան բոլոր խաւերը՝ յափշտակուած քրիստոնեայ կառավարութեան սիրով, անհուն կասկածի ու ատելութեան նշաններ էին ցոյց տալիս դէպի դարևոր թշնամին, դէպի մահմէտական ազգաբնակութիւնը։ Պատմութեան թելադրութիւնն էր այդ, ներշնչումը սև, դժբախտ անցեալի, երբ երկու ժողովուրդները՝ բաժանուած ծագումով, կրօնով, ազգայնական հակումներով, միմեանց միսն էին ուտում, պատրաստ կործանելու մէկը միւսին։

Եկաւ նոր տիրապետութիւնը։ Քրիստոնէութեան և քաղաքակրթութեան անունով նոր շրջան բացուեց։ Եւ հայ ժողովուրդը, որ հա՛մ քրիստոնեայ էր, հա՛մ հակուած դէպի քաղաքակրթութիւնը, նետուեց նոր տիրապետողների գիրկը, պատանեկան յափշտակութեամբ։ Հաշտութեան դարագլուխ բացուեց. և տեղացի ազգերի մէջ, շնորհիւ հեռատես քաղաքականութեան, խաղաղութեան գործը փոքր առ փոքր թևեր առաւ։

Սակայն ո՞ւր է քաղաքական հեռատեսութեան այդ հաճելի շրջանը, այնքա՛ն գրաւիչ մտածողի համար։ Ո՞ւր են այն օրերը, երբ բուռն ատելութիւնը տրամադիր էր տեղի տալ խաղաղ մտածողութեանը, երբ հաշտեցնող քաղաքականութեան հմայքին ենթակայ, քրիստոնեայ հայը և մահմէտական թիւրքը փոքր առ փոքր վարժուում էին միմեանց աչքերին եղբայրաբար նայելու, մոռացութեան տալու հին պատմութիւնը, սիրով ապրելու նոյն հողի վրայ, նոյն արևի տակ։

Ո՞ւր են այդ օրերը։ Հարցրէք ցաւերի սիրելիներին, հարցրէք Դօնդուկովի պատմագրին, Հալիկովների գաղտնի հրահանգներին ծանօթ պաշտօնեաներին, հարցրէք Գօլիցինին և նրա խորհրդաժողովի „յայտնի և անյայտ"

անդամներին, և նրանք թարմ փաստերով կը պարզաբանեն, թէ ինչպէս, որտեղից և ի՞նչ ճանապարհով նախկին անսահման ռուսասիրութիւնը տեղի տուեց այժմեան ռուսատեցութեան, և ի՞նչ եղանակով նախկին փոխադարձ ատելութեան տեղ սկիզբն առաւ այն համերաշխութիւնը, որ ձգտում է մերձեցնել կովկասեան հալածական ազգութիւնները, երբեմն այնքա՛ն թշնամաբար տրամադրուած, այնքա՛ն անտեղեակ իրենց քաղաքական շահերին։

Ահա մի քանիսը փաստերից։

Ութսունական թուականներին, Երևանի Նահանգապետ Շալիկով, ներշնչուած Դոնդուկով-Կորսակովի քաղաքականութեամբ, առաջինը եղաւ, որ Երևանի Նահանգում լարեց թիւրքերի և հայերի յարաբերութիւնները։ Թիւրք խաները, ազդեցիկ և կաշառուող, կանչւում էին Նահանգապետի ապարանքը և անուղղակի յորդորներ ստանում՝ դէպքեր ստեղծելու... Ոստիկանութեան կարևոր անդամները գիշեր-ցերեկ զբաղուած են պատմութիւններ սարքելով։ Գաղտնի հրահանգները յաջորդում էին մէկը միւսին, և այդ բոլորի հետևանքը եղաւ այն, որ նախկին խաղաղութեան յաջորդեց՝ կուռեցնելու սիստէմը, և մի քանի անգամ Երևանի քաղաքային հրապարակը եղաւ թատր հայ-թիւրքական ընդհարումների, արիւնահեղ և վերին աստիճանի գրգռիչ։

Տարիներ յետոյ այդ քաղաքականութիւնը անցաւ Բագուի Նահանգը և նրա կենտրոնական քաղաքը, որտեղ թիւրք տարրը ահագին թիւ է կազմում, ականատես եղաւ անախորժ դէպքերի։ Մի քանի ազդեցիկ թիւրք դրամատէրեր, որոնք սերտ կապեր ունէին Նահանգական իշխանութեան և առհասարակ իշխանութեան հետ, անդադրում կերպով ներշնչումներ էին ստանում՝ թոյլ չտալ, որ թիւրքերը օրինակ վերցնեն հայերից, և կամ մօտենան նրանց։ Այդ ներշնչումները պաշտօնական թղթերով չեղան, ճիշդ է, բայց թէ՛ հրահանգողները և թէ՛ հրահանգուողները միմեանց լաւ էին հասկանում, և այդ պատճառով երկպառակութեան թոյնը թափանցում էր ամբոխի բոլոր խաւերը մեծ աջողութեամբ։ Համիսլամական հողմը աւելի բորբոքեց կրակը։ Թունալից հողմը գալիս էր Կ. Պոլսից, զանազան էմիսարների միջոցով, ուղարկուած Նոյնիսկ Աբդիւլ Համիդի անձնական կարգադրութեամբ։ Թէ „տեղական“ և թէ „արտաքին“ պրոպագանդը ուղղած էին հայերի դէմ և հասկանալի է, թէ ինչու կարճ միջոցում թիւրքերի վերաբերմունքը դէպի հայերը դարձաւ շատ կասկածելի և չափազանց ամպամած։ Պառակտող քաղաքականութեան պտուղները երևացին, ի միջի այլոց, 1903 թուականին, երբ Բագուի թիւրքերը հայերի դէմ յարձակումն գործելու նշաններ ցոյց տուեցին, ոգևորուած այն աջակցութիւնից, որ ոստիկանութիւնը ցոյց էր տալիս այդ դիւական ծրագրին։

Երկպառակութեան քարոզը մահմէտական նահանգներից թափանցեց այն քաղաքները, ուր հայերը դրացի են վրացիներին, և հարկաւոր չէր երկար ժամանակամիջոց, որպէս զի հայ-վրացիական յարաբերութիւնները, երբեմն խաղաղ և մտերմական, ընդունէին թշնամական կերպարանք։ Բաթումի և Թելաւի դէպքերը, ինչպէս և Թիֆլիսում տեղի ունեցած թիւրիմացութիւնները՝ դրան ապացոյց։

Եկեղեցական կալուածների գրաւման միջոցին կառավարութեան անամօթութիւնը իր չափը կորցրեց։ Շատ քաղաքներում, ինչպէս Շուշի, Նախիջևան, Դանձակ, Թիւրքերը բացարձակ հրաւէր էին ստանում՝ ոստիկանութիւնից՝ զենուել և յարձակում գործել հայերի վրայ։ Զրի զենք էին առաջարկում. շատ դէպքերում՝ Նոյնիսկ փող և պաշտպանութիւն։ Եւ կատարեալ հրաշք պիտի համարել՝ որ ֆանատիկոսացած թիւրք ամբոխը չխաբուեց, չյափշտակուեց և չեզոք մնաց, ով գիտէ, գուցէ այն պատճառով, որ լուր կար, թէ հայերը մեծ պատրաստութիւններ ունեն...

Դաւը աւելի հեռու գնաց։ Կառավարութիւնը կամեցաւ ռուս գաղթականներին և մալական գիւղացիներին ևս իր գործիք դարձնել և այդ նպատակով 1903 թ.ի վերջերին այդ համայնքներից շատերին գաղտնի կերպով զենք ցրուեց, հրահանգելով՝ „յարձակուել հայերի դէմ, երբ նրանք ապստամբութեան փորձ անեն“։ Դա է հիմնական պատճառը, որ եկեղեցական գաղութների վերաբերմունքը դէպի տեղական ազգաբնակութիւնը օրէցօր դառնում է աւելի և աւելի յանդուգն, գրգռող և անսանձ։

Յիշատակուած փաստերը, թուում է, բաւական են ընորոշելու այն ուղղութիւնը, որին հետևում է ցարի կառավարութիւնը, մի ուղղութիւն, որը առանց ոևէ „գործնական“ հետևանքի հասցնելու, բնականաբար ստիպեց տեղացի ազգերին՝ բաց անելու իրենց աչքերը, խոր թափանցելու գաղտնի ծրագիրների մէջ և ըմբռնելու իրենց անմիջական անելիքը։ Այդտեղից է ահա բղխում այն ընդհանուր շարժումը, որ սկիզբն է առել մինչև այժմ միմեանց թշնամի ազգերի մէջ, և որի նպատակն է շաղկապել ներհակ ուժերը և ուղղել նրան դէպի ընդհանուր թշնամին — միապետութիւնը։

Բնորոշ են հետևեալ նշանները։

Երևանի մէջ երկու ամիս առաջ լոյս տեսաւ մի շրջաբերական, գրած թիւրքերէն լեզուով և ուղղած մահմէտական ազգաբնակութեան։ Դա մի կոչ է, որ հրաւիրում է թիւրքերին ինչպէս և հայերին, չխաբուել կառավարութեան նենգամիտ քաղաքականութիւնից, ականջ չդնել նրա սին խորհուրդներին, նախատեսնել այն կորըստաբեր ծրագիրը, որի նպատակն է կուռեցնել և թուլացնել տեղացի ազգերին, և իբրև վերջաբան՝ հրահանգում է անկեղծ, սրտաբաց և գիտակցական համերաշխութիւն Անդրկովկասեան կարևոր երկու ազգութիւնների՝ հայերի և թիւրքերի մէջ։

Նոյնպիսի հրաւէրներ, թէև ոչ յատուկ շրջաբերականների ձևով, հայկական յեղափոխական մարմինները ուղղեցին և վրաց ժողովրդին ու վրացի մտաւորականութեան։ Մեր վրացի դաշնակիցները արձագանք տուեցին քանի մի անգամ։ Եւ հակառակ շօվէն տրամադրութեան, որ վրաց ինտելիգենտ հասարակութեան մի մասի յատկանիշն է, համերաշխութեան գաղափարը, շնորհիւ արմատական և յեղափոխական տարրերի, փոքր առ փոքր ճանապարհ է գտնում իվերիական մտածողութեան մէջ, իբրև գրաւիչ նախանշան՝ վաղուայ շաղկապուած, դաշնակից գործունէութեան։

Կովկասեան բանուորական գործադուլները, կապակերպուած Բագու, Բաթում, Թիֆլիս, ընդհանուր առմամբ՝ համերաշխ գործունէութեան և միացած դիմադրութեան արտայայտութիւններ են։ Այդ շարժման մէջ, ուղղած կապիտալին և միապետութեան, վրացի բանուորը ձեռք տուեց մահմէտական բանուորին, ռուս աշխատաւորը հայ աշխատաւորին։ Եւ եթէ համերաշխութեան

գաղափարը կ'արտայայտուի նոյնպէս և գործագուլներից դուրս, այն դէպքերում, երբ բռնապետութեան զոհը հանդիսանում է մի ազգից մէկը և այդ ազգութեան պատկանող պրօլէտէրը, և միւսները խօսքով և գործով արձագանք են տալիս նրա վշտերին ու կոչին. — դա կը լինի մի մեծ, վեհ յաղթանակ, սկիզբը թշնամու իրական կործանման...

Ճգնաժամի ներկայ շրջանը աւելի քան կարօտ է մարտական տարրերի մերձեցման։ Մի տարի առաջ, եկեղեցական կալւածների խլման միջոցին, երբ բուն հայկական դիմադրութեան միացաւ ռուս յեղափոխութեան բողոքը,—կառավարութիւնը իր լեզուն կծեց։ Ներկայ թուականին, երբ մօրիլիզասիօնի դէմ միաժամանակ դիմադրութեան հրաւէր կարդացին և՛ Դաշնակցութիւնը, և Սոցիալ-դէմօկրատները, և Սոցիալիստ-յեղափոխականները, և վրաց Յեղափոխական մարմինը,—կառավարութիւնը զգաց հակահարուածի մեծութիւնը և յետ նահանջեց։ Այդ համերաշխութիւնը՝ միապետութեան սոսկումն է, քայքայումը նրա ծրագիրների։

Յեղափոխական տարրերի մերձեցման գաղափարը չպէտք է նսեմանայ պատահական ու երկրորդական դէպքերից, որոնք անխորհրդաւորապէս, միամիտ դիտողի աչքում՝ շովինիստական բնոյթ ունին, և կարող են անցանկալի սառնութեան առիթներ լինել։ Բռնապետութեան հարուածները այնքան խիստ են և ահաբեր, որ ինքնապաշտպանութեան բնազդն էլ, բնականաբար, յաճախ ընդունում է խիստ ու ծայրայեղ կերպարանք։

Մի օրինակ։

Երբեմն Կովկասի մէջ հայ տարրը ռուսական տիրապետութեան առաջապահն եղաւ։ Ընդհանուր հակում կար ոչ միայն դէպի ռուսական միտքը ու գրականութիւնը, դէպի ռուսական նորագոյն շարժումները, այլ դէպի ռուս կառավարութիւնը։ Հայ ընտանիքների մէջ մեծ աջողութեամբ մուտք էր գործում ռուսաց լեզուն, ռուս ուսուցիչը, ռուս դաստիարակչուհին։ Խառն ամուսնութիւնը դառնում էր սովորական։ Ռուս պաշտօնեան անգամ մեծ յարգանքի առարկայ էր։ Եւ ընդհանուր վերաբերմունքը՝ անկեղծ, բարեկամական։

Իսկ այժմ։ Այժմ շատ բան է փոխուած։ Խորապէս զայրացած այն անլուր տանջանքներից, որ միապետութիւնը պատճառեց խաղաղ, երբեմն այնքա՛ն լաւ տրամադրուած ազգութեան, հայ ժողովուրդը փոխեց իր դիրքը։ Նախկին վստահութիւնը փոխարինուեց մի անսահման կասկածով։ Ամէն ինչ որ բղխում է կառավարութիւնից՝ ուրիշ բան չէ ներշնչում, բայց եթէ կասկած ու նոյնիսկ թշնամանք։ Հակակրութեան զգացմունքը, հալածանքի ազդեցութեան տակ, աճեց և տարածուեց այնպիսի խնդիրների վրայ, որոնք արդի ռէժիմի հետ կապ էլ չունին։ „Ռուսաց թատրոն չպիտի գնալ. ընտանիքների մէջ ռուս վարժուհիներ չպիտի պահել. այլևս ոչ մի ամուսնութիւն ռուսի հետ“—ահա այն բացագանչութիւնները, որ լսւում էին ամբոխի մէջ ցասման օրերին։ Այդ բացագանչութիւններն ու կարծիքները, բարեբախտաբար հոսանք չկազմեցին, չդարձան ժողովրդական վերաբերմունքի արտայայտութիւն, մնացին իբրև բացառիկ, առանձնացած դէպքեր,—բայց իբրև հակակառավարչական տրամադրութեան նշաններ՝ արժանի են արձանագրելու։ Այդ ատելութիւնը ստիպողական է, կառավարչական մեքենայութիւններով ստեղծուած։ Եւ եթէ այդ փոխադարձ թշնամութեան մէջ կայ մի ցանկալի կէտ, դա այն է, որ այդ ատելութիւնը շատ հեշտութեամբ կարող է քաղաքական նոր ցնցումների աղբիւր լինել, և տանել ժողովուրդը դէպի կռիւ՝ ընդդէմ այնքա՛ն զզուելի դարձած միապետութեան...

Այդ քաղաքական այլակերպութիւնը միայն հայերի շրջանում չէ կատարուած։ Նոյնպիսի մի երևոյթ, թէև աւելի թոյլ կերպով, նկատելի է վրաց ժողովրդի մէջ։ Երբեմն վրաց հասարակութեան մէջ ուժգնօրէն հընչում էր իշխան Զավչավաձէի, Ակակի Ծերեթելիի և ընկերների կոչը, որոնց քաղաքական ամենամեծ հեռատեսութիւնը՝ հակահայկական քարոզն էր, և այն սերտ բարեկամութիւնը, որ ուզում էին պահպանել կառավարութեան հետ, այն էլ այնպիսի բախտախնդիրների միջոցով, ինչպիսին էր „բանաստեղծ“ Վելիչկօ։ Այժմ այդ օրինակ քարոզները հնչում են վրաց ժողովրդի ականջին անհաճոյ ձայնով։ Նրանք այլևս չեն գրաւում, այլ վրդովեցնում են։ Ցարերի կառավարութիւնը ծանր կերպով վերաւորուեց 19-րդ դարի իր դաշնակիցների սիրտը. — հալածեց վրաց լեզուն դպրոցից, եկեղեցիներից, ռուսական ծիսակատարութիւնը ամբողջովին մտցրեց իվերական տաճարների մէջ, դրժեց իր քաղաքական դաշնագիրը, փակեց շատ դպրոցներ, քշեց երիտասարդ վրացիներին և այդ օրինակ „արկածներով“ նախկին սիրոյ տեղ թշնամութեան սերմեր ցանեց... Եւ Վրաստանի մէջ բուսած յեղափոխական խմբերը, այդ քաղաքականութեան շնորհիւ, իրենց առաջ կենսական պարտաւորութիւն ունին՝ նախկին սիրոյ աւերակների վրայ՝ կուի և պայքարի դրօշակը պարզել... Այնտեղ էլ, երևկայ անձնէր ժողովրդի մէջ, երբեմն երբեմն հակառակութեան թունդ ձայներ են լսւում, ձայներ՝ ընդդէմ ռուսաց լեզուի, ռուսաց ազդեցութեան... որոնք, իհարկէ շովինիստական նշաններ չեն, այլ հակակառավարչական ատելութեան դիւրըմբռնելի արտայայտութիւններ։

Թիւրք ժողովրդի մէջ այդ օրինակ երևոյթ դեռ չկայ, սակայն դժգոհութեան նշանները այնտեղ էլ երևում են, — մի քանի նոր կայծեր, ոևէ շօշափելի առիթ, և քաղաքական հրդեհը այնտեղ էլ կը բռնկի, գուցէ և աւելի մեծ ուժով, որովհետև մահմէտականութիւնը երբէք հաշտ աչքով չէ նայել քրիստոնեայ Ռուսաստանի տիրապետութեան տարածման Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանների վրայ։

... Տասնիններորդ դարը սկսւեց Միապետութեան յաղթական մուտքով դէպի Կովկաս։ Քսաներորդ դարը սկսւում է մի զօրեղ կուով յաղթական Միապետութեան դէմ, որ տիրապետեց ամբողջ դար։ Բաւական է այդ։ Նրա բարիքն էլ տեսանք, չարիքն էլ։ Ժամանակն է, որ նա յետ նահանջի ժողովրդական ըմբոստացման ու յեղափոխական զօրաբանակի դիմաց։ Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՌԱՒՈՐ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ

ՄԱԿԵԴՕՆԻԱ

Եապօնեան մի ջախջախիչ հարուած ևս տուեց իր ինքնահաւան հակառակորդին. — Պօրտ-Արտուրը ընկաւ։ Նիկոլայ II-ը կորցրեց Խաղաղ օվկիանի վրայ իր իշխա-

նութիւնը և, ամենայն հաւանականութեամբ, կորցրեց ընդմիշտ։ Անցքը սովորականներից չէ, նա ունի համաշխարհային ծանրակշիռ կարևորութիւն։

Ցարիզմի „հմայքը“, որ սոսկումի մէջ էր պահում ասիական աշխարհը և մասամբ նոյնիսկ Եւրոպան, խախտուեց արիւնաներկ ու քարուքանդ եղած վիթխարի բերդում, որը հպարտ իշխում էր լայնարձակ երկրների վրայ...

Սարսափելի է պատահարը. չափազանց անողորմ փորձութիւնների է ենթարկւում գոռոզ, ինքնահաճ միապետութիւնը։ Պօրտ-Արտուրը գէթ Սեվաստօպոլի ճակատագիրը չունեցաւ. այնտեղ ցարիզմը յետ նահանջեց անգլօ-ֆրանսիական միացած ուժերի առաջ. իսկ այստեղ... մի փոքրիկ ասիական պետութիւն է, որ հասցնում է ծանր հարուածը, — մի երկիր, որ դեռ երէկ մրափում էր նահապետական կուլտուրայի գրկում, անգիտակ արևմտեան քաղաքակրթութեան, անտեսուած ու արհամարհուած Եւրոպայից։

Զարմանալի չէ, որ Պօրտ-Արտուրի անկումը անսովոր շառաչում ունեցաւ ամբողջ աշխարհում, իսկ Ռուսաստանի մէջ յարուցեց կսկծալի ճիչերի մի սոսկալի ժխոր... Նա չէր կարող միաժամանակ չցնցել և ասիական յետամնաց ցեղերին, չ'անդրադառնալ նրանց հոգեբանութեան վրայ։ Մի վայրկեան նրանք, թերևս, սթափուեցին լեթարգիական քնից և ապշանքով դիտեցին փոքրիկ նիպօնների յանկարծական, աշխարհադղորդ թռիչքը։

Նոր անսպասելի երևոյթ, հասարակագիտական տեսակէտից միանգամայն ուշագրաւ, անբացատրելի։

Եապօնականութիւնը սլավօնականութեան դէմ յաղթական,—ահա հրահանգիչ իրողութիւնը։ Բայց եապօնականութիւնը գալիս է Ասիայից ոչ թէ ասիացու, այլ եւրոպացու կերպարանքով, թարմ, շարժուն, առաջադէմ։ Նա գալիս է քաղաքակրթութեան դասեր տալու անշարժ, քարացած Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որը յաւակնութիւն ունի դեռ Պետրոս Մեծի օրով մտած լինելու արևմտեան կուլտուրայի աւազանի մէջ, որը յաւակնութիւն ունի լուսաւորութեան ջահակիր լինելու նաև ասիական հօրիզոններում, բայց որը այժմ, փորձութեան օրերին, հանդէս է գալիս աշխարհի առաջ իր զազրելի մերկութեամբ, իր խայտառակ անկարողութեամբ՝ հասկանալու և կիրառելու ամենատարրական բարեբաւումները իր վարչական մեթոդի, ներքին ու արտաքին քաղաքականութեան մէջ։

Այդ ցայտուն հակասութեան մէջ է սոցիոլոգիական ապշեցնող երևոյթը։ Ղրիմի պատերազմը մի անողոք դաս էր, բայց եւրոպականութեան ծիրանի հագած ասիական բռնապետութիւնը չքաղեց դրանից հարկաւոր հրահանգները։ Երկիրը շարունակեց քարացած մնալ Պօբէդօնօսցէվների ուժիմի տակ և բռնակալութեան մեքենան անգամ չկարողացաւ գէթ այնպէս բարեփոխուել, որ պատասխանէր արտաքին, գիշատիչ քաղաքականութեան պահանջներին, Ռուսիայի տարածման՝ դէպի հարաւ ու արևելք,—պահանջներ, որոնցով ապուշ բիւրոկրատիան ձգտում էր վարագուրել, մթնացնել, խեղդել այլ կարգի պահանջները, — ներքին ռէֆօրմների ստիպողական անհրաժեշտութիւնը։

Եւ ահա հետևանքը։ Ռուս դիւանագիտութիւնը, իր իսկ սեփական շահերի տեսակէտով, յայտնուեց միանգամայն ստոր իր կոչումից և ծիծաղաշարժ՝ իր անճարութեան մէջ։ Նա շարունակ գրգռեց հակառակորդին, առանց չափելու նրա ուժերը և առանց իմանալու իր սեփական պատրաստականութեան հնարաւոր չափը։

Ռուս զօրավարներն ու ծովապետները միանգամայն արգահատելի կերպարանք ընդունեցին եապօնական առաջնորդների դիմաց, որոնք թէ իրենց հմտութեամբ և թէ արիութեամբ աշխարհի հիացմունքը շարժեցին։

Ռուսաստանը ջախջախուեց ովկեանի վրայ, նրա նաւատորմի ողբալի փշրանքներն են միայն մնում այժմ։ Բալտեան նաւաբաժինը, զրկուած գործողութեան իր յենակէտից՝ զուր, ծիծաղաշարժ պտոյտներ է անում... այն ինչ՝ ցամաքային զօրքն էլ գրեթէ բոլորովին շանս չունի յաղթելու։

Դէթ այժմ կը խրատի՞...

Հարիւր հազարաւոր մարդկանց ահռելի կոտորածը և անպատիւ պարտութիւնները պիտի դրդե՞ն արդեօք կոյր բռնակալութեանը և թուլամիտ վեհապետին՝ արձագանք տալ հասարակութեան բարձրագոչ պահանջին և մտցնել գէթ մի շարք անյետաձգելի, հիմնական ռէֆօրմներ...

Այդ է որ կը տեսնենք։ Առայժմ ասպարէզը տարտամ, հակասական շշուկներին է. առայժմ յայտնի է միայն, որ „աստուածընտիր“ Նիկոլայը քուրմ-Պօբէդօնօսցեվից հրահանգուած, տրամադիր չէ մի նշանախեց անգամ զիջելու իր միապետական իրաւունքներից...

Թւում է միւս կողմից, որ կառավարութիւնը անցքերի անողոք տրամաբանութիւնից մղուած՝ հակամէտ է որոշ չափով գոհացում տալու սահմանադրական, ըմբոստ տարրերին և ներքին գործերի մինիստրի պաշտօնում պահել քիչ թէ շատ ազատամիտ մէկին, — մի Միրսկի կամ մի Վիտտէ։

Թէ ո՞ր քաղաքականութիւնը ի վերջոյ կը գերակշռէ, թէ որքան յամառութեամբ Նիկոլայ II-ը կը շարունակէ պնդել իր աստուածատուր իրաւունքների վրայ, — դա յամենայն դէպս, կախուած է նրանից, թէ որքան ուժգին կ'որոտայ յեղափոխական հրաբուխը...

* * *

Մերձաւոր արևելքում... մխիթարական բան չկայ։ Դուռը յուսահատեցուցիչ յամառութեամբ քաշքշում է մակեդոնական ռէֆօրմների հարցը և մերժում է իրագործել նոյնիսկ պահանջների այն minimum-ը, որ վաղուց առաջադրել է նրան աւստրոռուսական համաձայնութիւնը։ Նա ոչ թոյլ է տալիս աւելացնել եւրոպական ժարդարմերիան խուռն, ալէկոծ վիլայէթներում, ոչ էլ ուզում է, որ տեղում գտնուած եւրոպացի ժանդարմները մտնեն ուևէ շփման մէջ քրիստոնեայ ազգաբնակութեան հետ։

Երկու վերահսկող պետութիւններն էլ առանձին փութկոտութիւն չեն ցոյց տալիս իրենց քայլերում, մանաւանդ Ռուսաստանը, որ բնաւ գլուխ չունի մերձաւոր արևելքի խնդիրների համար։ Զարմանալի չէ այդ տեսակ պայմաններում թիւրք կառավարութեան յանդուգն ընթացքը ժողովրդի ու յեղափոխականների նկատմամբ։ Նա այն աստիճան լրբացաւ, որ նոյնիսկ հրապարակ հանեց մի շրջաբերական, թիւրք, բուլգար ու յոյն լեզուով, Մակեդոնիայի բոլոր անկիւններում, որով ձգտում է ստեղծել այնտեղ Հայաստանում տիրող վիճակը։ Հետևեալ արտակարգ միջոցներն են ազդարարւում այդ շրջաբե-

բականով. արգելուում է բացարձակապէս ամէն մէկին՝ դուրս գալ իր գիւղից և շրջել դաշտերում, արևը մայր մտնելուց յետոյ։ Ստիպողական պարապայում անհրաժեշտ է լիազօրութիւն առնել տեղական իշխանութիւններից։ Զինուորական առաջնորդներին պատիրուում է հրացանի բռնել այդ հրամանի դէմ մեղանչողներին, որպէս „խառնակիչներին մեղսակցողների“։

Այդ յարաճուն խստութիւնները ազդում են արիւնակից Բուլգարիայի վրայ, որի կառավարութիւնը երբեմնապէս, մանաւանդ վերջերս, սուր դիտողութիւններ է անում Կ. Պոլսում և ակներև կերպով պատրաստուում է պատերազմի...

* * *

Ցեղափոխութիւնը իրօք զինադադար է հրատարակել Մակեդոնիայում, բայց վերջին ժամանակներս այնտեղ առաջացել է մի սոսկալի պատուհաս, — յոյն, սերբ ու բուլգար արշաւախմբերի փոխադարձ կատաղի յարձակումներն ու արիւնհեղութիւնները — որոնք, դժբախտաբար, սուլթանի ջրաղացին են միայն ջուր ածում և յաչս Եւրոպայի վարկաբեկ անում Մակեդոնիայի դատը։

Հիլմի փաշան, ի՞նչ ասել կ'ուզէ, ամէն կերպ խրախուսում է ցեղերի այդ կռիւը և երկու պետութիւններից յայտարարած՝ Միւրցտեգի տխրահռչակ ծրագիրը անզօր է գտնուում հարկադրելու իր կամքը։ Մի տարի եւրոպական հսկողութիւն — և արդիւնքը տակաւին անշօշափելի... Ահա ցաւագին իրողութիւնը։ Եւ այդ միևնոյն հետևանքն է եղել սուլթանահպատակ բոլոր երկրներում, որոնց համար այլևայլ ժամանակ, Եւրոպայի ճնշման տակ, ռէֆօրմներ են խոստացուել, բայց այդ ռէֆօրմներն իրագործելու համար՝ բարձր կօմիսարներ նշանակուել են միշտ սուլթանի կողմից, և սուլթանի մարդիկ, — Զեյադ փաշա՝ Կրէտէում, Հաքիր փաշա՝ Հայաստանում, Հիլմի փաշա՝ Մակեդոնիայում...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԼՈՒԻԶ ՄԻՇԷԼ

—

Մի ասող մարեց յեղափոխական կանանց աշխարհում—ամենամեծը, ամենափայլունը։ Լուիզ Միշէլ, հռչակաւոր „Կարմիր Կոյսը“, գերեզման իջաւ 74-ամեայ զառամեալ հասակում, տանելով իր հետ բոլոր յեղափոխական մտածողների, նոյնիսկ յետադէմ հակառակորդների յարգանքն ու հիացմունքը։

Աշխարհական „սրբերից“ էր նա, որ իր գեղեցիկ, հմայիչ կեանքով սեփականութիւն է դառնում ոչ միայն Ֆրանսիայի, իր հայրենիքի, այլև բոլոր ժողովուրդների, ամբողջ տառապող ու երազող մարդկութեան։ Նրա կեանքը մի դիւցազներգութիւն էր, լի մրրկայոյզ դրուագներով, ուր բանտ, աքսոր և ամէն տեսակ հալածանքներ իրարու յաջորդելով, երկա՛ր տարիների ընթացքում տրորեցին նրա կանացի գոյութիւնը և սակայն չկարողացան խորտակել նրա կամքը, և նա միշտ մնաց անվկանդ, խանդավառ յեղափոխական, անշէջ հաւատով՝ դէպի Ժողովրդական Գործի յաղթանակը...

Արևմտեան կին-գրողների ու պրօպագանդիստների շարքում նա մի բախտաւոր բացառութիւն էր։ Սէվէրիններ ու Ցետկիններ պէս նա չէր գրհանում լոկ խօսքի ու գրչի մարզանքներով, այլ դրա հետ զուգընթացաբար մղում էր նաև գործի պրօպագանդը, նետուում էր ամենավտանգաւոր արկածների մէջ, բերում էր իր սիրած դատին իր բոլոր եռանդը, իր բովանդակ անձնաւորութիւնը։

Ցեղափոխութիւնը վաղուց նուիրական պաշտամունք էր նրա համար, բայց նա լոկ տաքգլուխ մի երազող չէր, կուելու, զարնուելու արեւսի սիրահար, այլ մի մոլեռանդ տենչացող ազատ ու երջանիկ ապագայի՝ թշուառ, բազմատանջ մարդկային մեծամասնութեան, ամբոխի համար, որին նա սիրում էր մինչև բացարձակ ինքնամոռացութիւն։

Այդտեղ է „Կարմիր Կոյսի“ ուժը։ Նա յայտնի եղաւ դեռ 1871-ի ահաւոր անցքերի միջոցին, երբ պրուսացիների յաղթական արշաւանքի դիմաց Պարիզի Կոմմունան հպարտ բարձրացրել էր իր ըմբոստ գլուխը, ծածանեցնելով „սոցիալական հանրապետութեան“ կարմրագոյն դրօշը։ Լուիզ Միշէլ մէկն էր այն դժոխային, հերոսատիպ դէմքերից, որոնք գերագոյն ճգնաժամի օրերում առաջ մղեցին այդ զարհուրելի աշխարհասասան դաւագրութիւնը, ուղղած բուրժուազական տիրապետութեան դէմ...

Երկու ամսւայ հերոսական դիմադրութեան ընթացքում Լուիզ Միշէլ մարմնացած անձնուիրութիւն էր, մի օր իբրև վիրակապ ու գթութեան քոյր, միւս օր իբրև քարոզող, մտքերը վառող, միւս օր իբրև կուող, մարտիկների շարքում, բարրիկադների վրայ, ուր և վերք ստացաւ...

Եւ երբ „Կոմմունան“ յաղթահարուեց, երբ հայրենակից կառավարութեան ձեռքով Պարիզը վերածուեց մի վիթխարի սպանդանոցի—այն ժամանակ հնչեց գերեզմանական խաղաղութեան մէջ „Կարմիր Կոյսի“ սասանեցուցիչ անէծքը դաւաճան կառավարութեան հասցէին, որը զարգացած կոմմունիզմի ուրուականից, վագրի մոլեգնութեամբ նետուել էր հազարաւոր արիւնակիցների վրայ և, ի տես պրուսական զօրաբանակի, կատարել էր մի անօրինակ ողբերգութիւն...

Հերոսուհու նոյն անվեհերութիւնը մենք տեսնում ենք և զինուորական ատեանի առաջ, ուր փոխադրուեցին ողջ մնացած „Կոմմունարները“ և ուր Լուիզ Միշէլ, գլուխը միշտ բարձր, յանդուգն ու մոլեգին պատասխաններով շանթահարում էր դատաւորներին։

Աքսորի դատապարտուեց շատերի շարքում և ամբողջ 9 տարի անցկացրեց Նոր-Կալէդոնիայի արևակէզ խորշերում։

Կին-հերոսը չ'ընկճուեց աքսորի տառապանքներից. նա ինքն էր սիրտ տալիս իր բախտակից երիտասարդներին, բաժանում էր նրանց հետ իր ունեցածը բացարձակապէս զրկում էր իրեն... Սակաւ չէ պատահում, որ կատաղի ատելութեան հետ՝ մարդիկ կրում են իրենց ծոցում և կատաղի սէր ու կարեկցութեան զգացում։ Ատելով ժամանակակից կարգերի ներկայացուցիչներին, Լուիզ Միշէլ անսահման ու անխառն սէր էր տածում դէպի բոլոր զրկուածները. ամբողջ լացող, հալածական աշխարհը նրա պաշտամունքի առարկան էր։

Աքսորից վերադառնալով, նա նախկին թափով շարունակեց քարոզել, անդադար պտոյտներ գործելով Ֆրանսիա, Անգլիա, Շվեյցարիա, ուր բազմամարդ միթինգներում արծարծում էր անիշխանականութեան գաղափարները։ Նա կին-մարգարէի տիպարն էր, որ իր գաղափարական ֆանատիկոսութեան մէջ յաճախ ծայրայեղ քայլեր

էր անում. այդպէս, 1884 թուին, նա կիսաքաղց ամբոխի գլուխն անցած՝ պաշարեց հացագործի մի շարք խանութներ, ընդհարում ունեցաւ ոստիկանութեան հետ և այդ արկածի պատճառով չորս տարի ևս բանտ նստեց։ 1888-ին Պարիզում արտասանած մի ճառի համար — դարձեալ չորս ամիս բանտ։

Անխո՜նջ, մոլեռանդ աշխատաւոր։

Կախարդիչ էին այդ անսովոր կնոջ ճառերը հրապարակական ժողովների մէջ, նոյնիսկ նրանց համար, որոնք չէին բաժանում նրա աշխարհայեցութիւնը։

1896-ի ամառն էր. Լոնդոնի միջազգային սոցիալիստական կոնգրէսը վերջանալուց յետոյ, հետաքրքիրների խուռն բազմութիւն — բոլոր ազգերի ներկայացուցիչներից — դիմեց դէպի անիշխանականների հոյակապ ժողովասրահը, ուր պիտի խօսէր Լուիզ Միշէլ։ Մի շարք անիշխանական հեղինակութիւններից՝ Կրապոտկինից, Ռէկլիւից և ուրիշներից յետոյ, սրոտընդոստ ծափահարութիւնների մէջ. բեմ դուրս եկաւ „Կարմիր Կոյսը“ իր տիտանեան հասակով։ Չէինք տեսել, որ կին-ագիտատորը այդքան հմայիչ տպաւորութիւն գործէր։ Եւ խօսքի ուժը չէր, որ շղթայած էր պահում ահագին հասարակութեան պատկառոտ ուշադրութիւնը—ոչ. խօսքը միակերպ էր, մտքերը սովորական, անիշխանական ֆրազէոլոգիայից. մեզ կաչկանդողը խօսողի անձնաւորութիւնն էր, նրա անկեղծ ցասումը, նրա վառող, հրդեհող տեմպերամենտը, նրա անդուսպ, թունոտ ատելութիւնը դէպի ժամանակակից սոցիալական կարգերը։ Մեր առջև ծառացած էր ինքը տիեզերական վիշտը, իր բոլոր սևերով, ինքը ըմբոստացող նահատակութիւնը...

Եւ մինչև վերջին շունչը աշխատեց նա իր դատի համար, 74 տարեկան հասակում անգամ քարոզչական պտոյտներ էր անում գաւառների մէջ, ուր նրա քայքայած առողջութիւնը ստացաւ, վերջապէս, մահաբեր հարուածը։

Աքանչելի՜ դէմք, հազուադէպ երևոյթ նոյնիսկ արևմտեան, լուսաւոր աշխարհում,—ո՞ւր մնաց արևելեան կիսակիրթ երկրներում... Մինչև չբազմանան Լուիզ Միշէլները, թուում է, թէ դեռ երկար պիտի գլորուի մարդկային առաջադիմութեան անիւը, մինչև իր բաղձալի շրջանին հասնելը...

Մ. Վ.

ԹԵՐԹՕՆ

ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ԸՆԿԵՐՈՋ ՆԱՄԱԿԸ

Տաղկական 6-ամեայ բանտարկութիւնից նոր ազատուած մի ընկեր հաղորդում է մեզ իր տպաւորութիւնները եւ մի շարք իրողութիւններ, որ սիրով յանձնում ենք հրատարակութեան։

Սիրելի ընկերներ,

Եթէ անկարող եղայ իսկոյն գրել ձեզ, պատճառը այն է, որ դժուար էր ինձ մէկէնմէկ գրիչ ձեռք առնել. վեց տարուայ դժոխային պայմանները բռնադատեցին կամքս և առողջութիւնս քայքայելու հետ՝ վարժեցրին ինձ թիւրքերէն լեզուին ու ստիպեցին գրեթէ մոռանալ մայրենի լեզուս, որով դժուարանում եմ այժմ մտքերս արտայայտել։ Ծիծաղելի դրութիւն... Ես, որ երբեմն այնքան զայրանում էի, լսելով ոևէ հայի բերանից թիւրքական բառբառ։

Չերմ ողջոյնե՛ր ձեզ և բոլոր նրանց, որոնք—հարազատ կամ օտար—խօսքով եւ գէնքով մեր ապագայ յոյսերի կռիւն են մղում։ Բայց մանաւանդ համբոյրնե՛ր մեր խնկելի նահատակների աճիւնին, որոնք հայրենիքի դաւեր նախատինքը իրենց արիւնով լուացին։ Նահատակներ, որոնք ամէն տեղ յոյսեր ներշնչեցին, կենդանութիւն սփռեցին։

Ողջո՜յն և այն տարաբախտ ընկերներին, որոնք հեռու իրական կեանքից, բանտերի խորքերում իրենց օրերն են համրում, յոյսի ու տենչի մի զգացումով՝ ելնել ու շարունակել այն ուղին, որ կիսատ թողին բախտի ձախորդ բերմունքով։ Բանտ ու կապանքները յեղափոխական գործի աղն են, նրանց ծանրութիւնը աւելի քաղցր ու հրապուրիչ է դարձնում ազատութիւնը...

*

Որքան կ՚ուզեն, թող պնդեն մեր հակայեղափոխական տարրերը՝ թէ բռնութիւններն ու աղտոտները յեղափոխական շարժման հետևանք են... Ահա ձեզ Կիլիկիան, որ ըստ երևոյթին հանգիստ է, ուր հայ յեղափոխականի ստւերն անգամ չի երևում, և սակայն ինչե՛ր չեն կատարւում նրա խորքերում, մութ և խոնաւ բանտերի մէջ...

1897-ի ընդհանուր ներումից յետոյ հարիւրաւոր հայեր, շատերը ականաւոր հարուստներից, կառավարութեան աւերով ընկել են բանտ՝ Զէյթուն, Մարաշ Սիս, Այնթապ, Հալէպ, Հաճըն և այլն, և միայն երկար ժամանակ այնտեղ փտելուց և վերջին փարան թիւրքին կերցնելուց յետոյ՝ կարողացել են իրենց կաշին ազատել։ Մանրամասնութիւններին յետոյ կը դառնանք։ Այդ բոլոր բանտարկութիւնները կատարւել են քաղաքական անուան տակ, թէպէտև ոչ մի նշան չունեն այդ անունը կրելու։

Երկիր ճամբելու համար՝ կենտրոնական քաղաքներում —Սեբաստիա, Ատանա, Հալէպ ևն—ժողովում են պանդուխտ հայերին և միմեանց վրայ թափում բանտերի նեղ խուցերը, անհաց, անջուր, և ամբողջ շաբաթներ սպասեցնել տալուց յետոյ, բոլորին միմեանց կապելով, քշում են, Աստուած գիտէ, ուր... Կէսը տեղ չէ հասնում. հասնողներն էլ ամիսներից յետոյ, անսնունդ մնալուց կմախքներ են դառնում։ Մարդ չէ կարող առանց արտասուքի նայել այդ թշուառների վրայ, որոնք առաջ են մղւում փոշու ամպի միջից տկլոր, ոտաբոբիկ... Մէկը եթէ նստել ուզենայ, միւսներն էլ նստելու են։ Իսկ կթէ ուղեկցող ժանդարմը անխիղճ է...

Հալէպից այս կողմը, Քէփեր-Ալթան խանի մօտ, ես տեսայ այդպիսի մի խումբ, որի մէկ անդամը ամառուայ տօթին չդիմանալով՝ ուշաթափ ընկած էր, գոյնը սևացած, շրթունքները կապտած, աչքերի սևը կորսւած։ Արթին էր անունը, Զմշկածակցի, 18 տարեկան։ Այդ դրութեան մէջ նա պիտի հասնէր մինչև Զմշկածակ։ Ո՞վ էր հոգացողը... Երկու ձիաւոր ոստիկաններ։ Համար միևնոյն էր,—թէկուզ երիտասարդը մեռնէր։ Միւս աքսորականները աւելի լաւ դրութեան մէջ չէին, որ կարողանային օգնել։ Մօտս մի շիշ կիտրոնի աղաջուր կար, դրի բերանը, աչքերը բաց արեց, պապակած էր։ Մի քիչ խմեց, կեանք առաւ. բայց ի՜նչ. վայրկենական զովութիւն... Վերջը՞, ընթերցող, հասկացիր...

Այո՛, „խաղաղութիւն“ է այդ կողմերը։ Խմբերով չեն կոտորում. մէկ-մէկ. դա „խաղաղութիւն“ է... Փորձի համար անցէք գլխաւոր ճանապարհներից մէկով։ Հեռից

կը տեսնէք փոշու մէջ կորած խմբեր, 10-15 հայ, ծերունի և մանուկ և նրանց ետևից 1-2 ձիաւոր ոստիկաններ։ „Հայդէ, թրէլի“ — ուրիշ խօսք չունեն։

Երկու տարի սրանից առաջ մի այդպիսի խումբ էին տանում Ատանայից, Մարաշի վրայով, դեպի Խարբերդ։ Բազարջիկից անցնելու միջոցին սկսում են ծեծել խեղճերին, իսկ երբ հասնում են Աղ-Սու գետի կամրջին, նրանցից երեքին ջուրն են թափում։ Եւ խնդիրը իրենց վրայ չծանրանալու համար, ոստիկանը յայտնում է Մարաշում, թէ երեք հայերը, իր զէնքը խլելով, փախել են... Անցաւ սակայն մի քանի օր և Աղ-Սուի միջից մի դիակ հանեցին. մի քիւրդ եկաւ վկայելու, թէ ինքը տեսել էր, ինչպէս ոստիկանները հրացանի կոթերով զարկին ու ջուրը նետեցին հայերին։ Քիւրդը բանտարկուեց երկար ժամանակով...

Սրանք հրապարակ եկած իրողութիւններն են,—հարիւրաւոր նման ոճիրներ կատարւում են աչքերից հեռու, մութ անկիւններում, ձորերի ու անտառների մէջ։ Ինչե՞ր չեն անում Մարզուանի հրդեհի սարսափները, քանի՞ քանի տեղեր այդպիսի փորձեր են կատարւած, աչող կամ անյաջող...

„Յեղափոխականներ չկան, խաղաղութիւնը կատարեալ է“։ Ողբալի՞ թիւրիմացութիւն... Տաճիկը վճռական ձայնով հրամայում է մեզ մեռնել և հրամանը ի գործ է դնում բոլոր կարելի ու անկարելի միջոցներով...

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Մեր խմբագրութիւնը եւրոպական մամուլին հաղորդեց հետևեալ երկու հեռագիրները, ստացած երկրից.

Կ. ՊՕԼԻՍ, 23 դեկտեմբերի
(Սոֆիայի վրայով)

Թիւրք կառավարութիւնը նոր միջոց է հնարել՝ հայերի դէմ կռուելու համար։ Դիարբէքիրի շրջանում թիւրք երիտասարդների մէջ, կառավարչական գործակալների ջանքերով, կազմել են ահաբեկիչների խմբեր, վ ա թ ա ն փ է ր վ է ր անունով, որոնց յանձնարարւած է սպանել կասկածելի հայերին։ Այդպէս՝ Ստեփանեան անուն հայը, որ նոր էր արձակւել իր երեքամեայ բանտարկութիւնից, ամենաանխիղճ կերպով խողխողուեց, իր ընտանիքի հետ միասին, վաթան-փէրվէրների ձեռքով։ Այդ նորաստեղծ խմբերը սարսափ են տարածում ժողովրդի վրայ։

ՎԱՆ, 29 դեկտեմբերի
(Ուրմեայի վրայով)

Վիլայէթի իսլամ ազգաբնակութիւնը զինւում է կառավարչական ջանքերով։ Կարճկանի կողմերում յայտնի արիւնարբու Մուսա բէկը նորակազմ ջան-բէզարների գլուխ է նշանակւած։ Վերջինները բորբոքման նշաններ են ցոյց տալիս։ Վանից Կառկառ ուղարկւած զօրքը ահագին զբաղմունքներ պատճառեց խաղաղ ժողովրդին։ Տուրքի հաւաքումը կատարւում է նմանը չտեսնւած բռնութեամբ և ծեծով։ Վերին-Կառկառում ծեծից 18 հոգի են հիւանդացել։ Եղեկիս գիւղում բռնաբարւած են 5 կանայք։ Հարստահարութիւնները չափ չ՚ունեն։

*

Հայ Յեղ. Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէների տարեկան Պատգամաւորական Ժողովը հետեւեալ հեռագիրն է ուղղել Միացեալ Նահանգների նախագահ Թէոդոր Ռուզվէլտին.

Մեծարգոյ տէր,

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէները տարեկան Պատգամաւորական Ժողովի գումարւած Պոսթրնի մէջ, դեկտեմբեր 25, 26, 27, կը մատուցանեն ձեզի իրենց սրտագին շնորհաւորութիւնները ձեր յաղթական ընտրութեանը համար Միացեալ Նահանգներու բարձրագոյն պաշտօնին, ինչպէս նաև իրենց անկեղծ գնահատումը այն համակրալից ընդունելութեանը համար, որ ցոյց տուիք Հայոց կաթողիկոսի պատգամաւորներուն, և ձեր պատգամաձառին ու հրապարակախօսութիւններուն մէջ այն փութկոտ ուշադրութեան համար, որով մարդասիրական հայրանիշ մը դրիք այն ժողովուրդներու վիճակին հանդէպ, որոնք թշուառացած են թրքական զարհուրելի բռնակալութեան տակ։ Թոյլ տուէք մեզի, պ. նախագահ, խնդրել և յուսալ, որ ձեռքի տակ եղած բոլոր օրինաւոր միջոցներով պիտի ջանաք ապահովել ամենաանհրաժեշտ բարենորոգումները, որ է կեանքի և պատուի ապահովութիւն անէր, անպաշտպան հայերուն, որոնք թրքական ռէժիմին տակ ենթակայ են սիստեմատիկ բնաջնջումի։ Մեր ժողովը մեծ յոյս ունի Միացեալ Նահանգներուն վրայ, իբր ազատութեան ախոյեանի, որոնց հայերը մեծ բան կը պարտին իրենց մասաւորական զարգացման և առաջադիմութեան համար և որոնք միշտ իրենց ազնիւ և անշահախնդիր ձայնը բարձրացուցին ի նպաստ բռնակալութեան լուծին տակ տառապող ժողովուրդներուն։

Այդ հեռագրին իբր պատասխան, արտաքին գործերի մինիստրութեան փոխ-քարտուղարը, պ. Լումիս, հետեւեալ նամակն է ուղարկել հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պատգամաւորական Ժողովի նախագահին.

Տէր,

„Նախագահը այս նախարարութեան յանձնած է անցեալ մամուլ 27 թուակիր ձեր իրեն խրկած նամակը։

„Ի պատասխան, պարտիմ տեղեկացնել ձեզ, թէ Նախագահը իր շնորհակալութիւնը կը յայտնէ պատգամաւորական ժողովի կոմիտէներուն, անոնց շնորհաւորումներուն համար՝ իր ընտրելուն առթիւ Միացեալ Նահանգներու Նախագահութեան և անոնց արտայայտած գնահատումին համար՝ իր հանրային այն գործերուն և ճառերուն, որոնք յայտարար են իր համակրութեանը հայ ժողովրդին“։

*

Վերջին հեռագիրը Պետերբուրգից հաղորդում է իշխան Գոլիցինի հրաժարականը, կամ աւելի ճիշդ հրաժարեցումը՝ կովկասեան կառավարչապետի պաշտօնից։ Իբրև նրա յաջորդ, Պարիզի լրագիրները տալիս են հետևեալ անունները՝ Մեծ իշխան Սերգէն, որ կը լինի Նոր Չարիք Կովկասի համար, իշխան Սվեատոպոլկ-Միրսկի, հրաժարւող ներքին գործերի մինիստրը, և իշխան Օլդենբուրգի—երկուսն էլ անզօր դիմադրելու տիրող ռէժիմին։

*

Կաթողիկոսական պատգամաւորութիւնը, որ երկու մեծ հանրապետութիւնների նախագահների մօտ ընդունելուց յետոյ գնաց Լօնդոն, Էտուարդ թագաւորին ներկայանալու համար, վերադարձաւ Պարիզ, առանց իր նպատակին հասնելու։ Անգլիական թագաւորը, ինչպէս իմացանք տեղեակ աղբիւրից, „քաղաքական նկատումներով“ անյարմար է դատել այժմ ընդունել հայոց եկեղեցու պետի նուիրակներին։ Պատգամաւորութիւնը մտադիր է մօտիկ ապագայում անցնել Հռոմ, Վիկտոր Էմմանուէլին ներկայանալու համար։

*

Ամերիկայի Բոսդոն քաղաքում սկսւեց հրատարակւել, անգլիերէն լեզուով, մի նոր ամսագիր, Armenia անունով, նուիրւած հայկական դատի պաշտպանութեան։ Հաճելի է մեզ յուսալ, որ անդրատլանտեան հայասէրների աջակցութեամբ նոր հրատարակութիւնը կը կարողանայ ոգևորութեամբ ծառայել ծրագրած նպատակին։

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ռուսաստան. — „Դրամ“ կոմիտէէն 12,000 ֆրանք:
Անգլիա. — Լոնդոնի Ալպեան կոմիտէէն 53. ֆր. 50 սանտիմ:
Բուլգարիա. — Փիլիպէի „Արամեան“ խմբէն 100 ֆրանք:
Համագումար 12,153 ֆրանք 50 սանտիմ:

ԲԱԼԿԱՆԵԱՆ կեդր. կոմիտէն՝

Ռումանիայի „Դանուբ“ կոմիտէն 1904 թ. ապրիլ, մայիս եւ յունիս ամիսներուն.—

Թ. քաղաքի խումբերէն՝ Անդրանիկ 21. 65 ֆրանք, Սերոբ-Աղբիւր 17. 20, Հրայր 12. 35, Պատանի 3, Նուիրատուութիւն 5 ֆր:

Ս-ի քաղաքի խումբերէն՝ Արաբս 34 ֆրանք, Կարին 30, Սեպուհ 31. 50, Վարազ 39, Սերոբ-Աղբիւր 27, Նոր-դար 42, զին. Դայլ 27, զին. Արամ 30, օժան. Նէմրութ 21, օժան. Հագուլ 47, օժան. Մասիս 41, օժան. Զինասէր 12, օժան. Տրդատ 21, օժան. Թէդայի 21, օժան. Տարօն 41, զին. Արարատ 28, Վարդան Մարգարեան 10, Քրմոքէն ամսավճար 1903 ապրիլ 1-էն մինչեւ մարտ 31 ին 12, Թ. քաղաքէն 61. 20 ֆր: Գումար 1,189 ֆրանք 45 սանտիմ:

Կալացի խմբերէն՝ Ծերունի 100 լէվ, Տարօն 50, Արծիւ 30, Ոմն բարերար Փոքշանցի 40 լէվ: Պրայէլայի ենթակոմիտէն՝ հետեւեալ խմբերէ՝ Առիւծ 74 ֆրանք, Գուրգէն 73, Տարօն 64, Ագուլ 76, Կարմիր Լեռ 70, Նիհար 65, Անդրանիկ 70. 85, Նեփրատ 66, Թորոս 74 ֆրանք:

Ռուսաստանի կոմիտէն՝ Արաւել խմբէն 20 լէվ, Պետս խմբ. 50, Տէրոր խմբ. 93, Խանասոր խմբ. 28, Տիկնանց Սօսի խմբ. 14, Շաբէ խմբ. 8. 50, Վրէժ խմբ. 8, Հայկ Արմէն 5: Գումար 226. 50 լէվ:

Համագումար 2101. 50 ֆրանք եւ 226. 50 լէվ:

ԺԼԱՑ կոմիտէն՝

1904 թ. հոկտեմբերի 4-ից մինչեւ նոյեմբերի 6-ը.—

Նօմ. 38-ով Թորգոմ խմբ. 28 ռուբլի, նօմ. 39-ով Զաւէնի հանգ. մեծ տօնավաճառ. նօմ. 66 թերթ. 282, „Առատի“ խմբերից՝ Կրակոտ 8. 50, Հայկազուն 16. 83, Ժլատի խմբերից՝ Պետս 14. 25, Ովսաննայ 66, Քեռի 16. 70, Արարատ 17, Արարատի հանգ. եւ երկու ձեռք սպիտ. 9. 77, տիկ. Ե. եւ օր. Ն-ի եւ այլոց ձեռն. վիճակախաղ 388. 40, Մուրհակ խմբ. 50, Բուժարանի խմբերից 100, Վիճակախ. ապառիկը 2, Մժեղից կնքած թերթով 10. 60 ռուբլի: Գումար 1,401 ռուբլի 5 կոպէկ:

ԱՊԱՌԱԺ կոմիտէն՝

1904 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը.—

Ա. Զ. 10 ռուբլի, Ի. Ի. 6, Ա. Ի. 6, Ց. Գ. 8, Եղ. Խ. 8, Մ. Ց. 10, Ց Ա. 3, Ց. Տ. Մ. 10, Ի. Ա. 10, Կ. Տ. Ա. 2. Զ. Ս. 10, Մ. Ա, 6, Հ. Բ. 4, Գ. Ս. 4, Ս. Տ. Գ. 3, Թ. Գ. 4, Ն. Գ. 2, Հ. Գ. 3, Ա. Ս. 2, Մ. Ա. 2, Վ. Ե. 4, Եղ. Խ. 10, Ս. Ա. 3, Ս-ի Ընկ. 1, Մ. Փ. 4, Խ. Գ. 6, Եղ. Վ. 10, Ն. Օ. 4, Կ. Պ. 4, Եղ. Ի. 10, Մ. Խ. 4, Ա. Մ. 6, Ս. Մ. 6, Ս. եւ Ց. 4, Հ. Գ. 2, Բ. Ս. 2, Բ. Ս. 2, Բ. Տ. Ս. 3, Մ. եւ Մ. 3, Ա. Դ. 2, Թ. Ս. 2, Ա. Պ. 10, Ա. Օ. 4, Հ. 1, Կ. Ց. 3, „Ս-կ“ 4, Թ. Ց. 2, Լ. Տ. Գ. 2, „Վ.-սկի“ 2, Ա. Պ. 2, Պ. Մ. Ա. 4, Գ. եւ Ա. 2, Ջ. Բ. 4, Ա. Ա. 2, Մ. Փ. Փ. 3, Ի. Գ. 4, Լ. Շ. 4, Ա. Շ. 4, Ա. Ս. 4, Մ. Ա. 2, Մ. եւ Մ. 6, Գ. Ե. 4, Գ. Մ. 2, Ն. Ց. 3, Թ. Զ. 2, Մ. եւ Տ. 3, „Լիոն“ 2, Ք. Ա. 2, Հ. 2, Բ. Ա. 1, Դրացի 0. 60, Գ. եւ Եղ. 1, Ա. Ա. 1, Դ. Տ. Բ. 1, Ս. Պ. 1, Ղ. Ա. 2, Մ. 2, Ց. Բ. 1, Գ. Վ. 1, Եղ. Զ. 3, Տ. Մ. Ց. 1. 50, Ա. Խ. 3, Ի. Ա. 1, Գ. Մ. 3, Ս. Մ. 2, Ե. Ա. 3, Ս. Ա. 1. 50, Ց. Թ. 0. 50, Կ. Ք. 1, Բ. Ղ. 1, Բէկը 1, Վ. Ս. 1, Շ. Ա. 1, Բ. Ք. 1, Ց. Տ. Մ. 2, Ա. Ա. 1, Ս. Ս. 1, Հ. 1, Գ. Ե. 0. 50, Կ. Կ. 1, Մ. Ե. 1. 50, Ա. եւ Խ. 1, Զ. Ն. 3, Ս. Խ. 1, Դ. Ա. 20, Ց. Ք. 10, Գ. Ը 6, Ա. Օ. 4, Տ. Մ. Գործ. 6, Տ. Մ. Ն. 20, Բլրազէն գ. Անդրանիկ եւ Հրայր խմբերից 100, պր. Դուլթա-ից 2000, Սեմ. երեկոյթից 47. 40, ամառ համերգից 97, Հրայր խմբ. 11, Անդրանիկ խմբ. 27, Մարգան 25, Մաշիս եւ Սէր 60, Գործ խմբի Թում.-ի յիշատակին տուած 270, Նպատակ խմբ. 100, Քնար 10 ռուբլի: Գումար 3,156 ռուբլի 50 կոպէկ:

Մ. Ք.-ի կեդր. կոմիտէն՝

1904 թ. փետրուարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը.—

Նօմէր 13՝ 4. 30 ռուբլի, նօմ. 14՝ 3. 20, Ն. 3՝ 5, Ն. 3՝ 2, Ն. 6՝ 33, Ն. 7՝ 5. 45, Ն. 8՝ 12, Ն. 13 2՝ 3. 50, Ն. 13 | 2՝ 2. 55, Ն. 20՝ 5. 50, Ն. 16՝ 6, Ն. 12՝ 9, Ն. 7՝ 1. 75, Ն. 13 | 2՝ 3. 70, Ն. 13 | 2՝ 0. 40, Ն. 16՝ 1. 10, Ն. 3՝ 41. 70, Ն. 6՝ 22. 21, Ն. 30՝ Նոր մանուկ խմբ. 20, Հրաբուղխ խմբ. 11, նօմ. 17 խմբ. 10. 90, Պահանջ խմբ. հին հաշիւ 39. 80, Հիզան Պայծառ խմբ. 15. 50, Կանանց Կարինէ խմբ. 21, նօմ. 58 խմբ. 10, նօմ. 60՝ 6, Հիզան Պայծառ խմբ. հին հաշիւ 28, նօմ. 33 խմբ. 7. 20, Ն. 34 խմբ. 2. 40, Ն. 61 խմբ. 5, Ն. 41 խմբ. 4. 30, Ն. 42 խմբ. 2, Ն. 43՝ 1. 20, Ն. 17՝ 3. 10, Մեծ քաղ. աշակ. միութ. ճիւղ 100, Կոփեցի Խէշոյի միջոցով 10, Մեքենայից 10, հարսանիքից 3. 15, Կարինէ խմբի միջոցով 30, նօմ. 62 խմբ. 3. 35, Կոռնկ խմբ. Գուզարաց շրջանի միջոց. 33, Արշալոյս խմբ. 100, Ն. 12 խմբ. 6, Ն. 12 | 2 11, Ն. 17՝ 8. 50, Ն. 19՝ 3, Ն. 44՝ 1. 50, Ն. 45՝ 2. 19, Ն. 11՝ 5, Ն. 20՝ 5. 30, Ն. 15՝ 4. 50, Ն. 21՝ 54, Ն. 58՝ 5, Ն. 59՝ 7, Ն. 53՝ 4. 70, Ն. 52՝ 4. 70, Ն. 13՝ 3. 40, Ն. 63՝ 10, Մեքենայից 1. 50, նօմ. 12 խմբ. 45, հանգանակ. թերթ Ն. 175՝ 5 ռ.

(Շարունակելի)

Տեղի սղութեան պատճառով ստիպեցանք «Դրօշակի» յառաջիկայ համարին յետաձգել հրատարակութիւնը Ռականապատի և Վասպուրականի Կ. կոմիտէներու, Ռակեհանքի, Նաւահանգստի կոմիտէներու և Սոֆիայի ենթակոմիտէի նուիրատուութեանց ցանկերուն:

ԳԼԽԱՏՈՒՄ

Երկուշաբթի, դեկտեմբերի 5/18-ին, Խարբերդի մէջ, գահիճների ձեռքով հրապարակով գլխատեցին երկու հայ երիտասարդներ՝ սերաստացի Ցակովբ և Շ. Գարահիսարցի Ցաբէթ Թէվէքէլեան, որոնք մեղադրւում էին մէկ քիւրդ աղայի և մէկ թիւրք ոստիկանի սպանութեան մէջ, Աւշանում: Երկու երիտասարդներն էլ նահատակեցին արիաբար:

ՏԷՌՕՐ

Հ. Յ. Դաշնակցութեան Վասպուրականի Կենտրոնական կոմիտէի վճռով տէոորի ենթարկեցին՝

1) Լեղկ գիւղի ռէս Միւքօ, իր յանդուգն և հանրածանօթ մատնութեան համար:

2) Փօլիս Մխիթար, իր գազանային և դաւաճան գործերի համար:

3) Փօլիս Մուրադ էֆէնտի, մատնիչ-լրտես Սերոբ-Աղբիւրի ժամանակ և ներկայումս էլ գաղտնի գործակալ Հայոց-Ձորում:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

ՀԱՑ ՑԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԴԷՊԻ ԿՈՒԻ

Բաղկացած 275 երեսից, նուիրուած եկեղեցական կալուածների յափշտակութեան և կովկասահայերի վերջին շարժումներին:

Գինը Եւրոպայում՝ 2 ֆրանկ, Ամերիկա՝ կէս դոլար
Կովկաս՝ 1 ռուբլի:

Դիմել «Դրօշակ»ի խմբագրութեան

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du „DROSCHAK“, Genève (Suisse)